«Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» ՀԿ

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիր

«Սոցիալական դեպքի վարման գործընթացի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերլուծական ուսումնասիրություն

2019

Հասցե՝ ք. Ալավերդի Սայաթ Նովա 14/35
Վեբ կայք՝http://www.armccms.org/
Էլ.հասցե՝ ccms.ngo@gmail.com
Հեռ: 098935053

Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն» կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

«Սոցիալական դեպքի վարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»

Վերլուծական ուսումնասիրություն

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում: «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Բովանդակություն

Ներածություն----------3

Սոցիալական դեպքի վարման գործընթացի
ուսումնասիրություն/ Հարցումների վերլուծություն----------7

Ֆոկուս-խմբային քննարկումների վերլուծություն----------30

ՍԱՏԳ աշխատակիցների դեպքի վարման
կարողությունների գնահատում----------62

Առաջարկություններ----------71

Հավելված----------90

Ներածություն

«Սոցիալական դեպքի վարման հիմանխնդիրները Հայաստանի Հանրապետությունում» ուսումնասիրությունը կատարվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնությամբ։

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի բարելավել սոցիալական ծառայությունները, այս ուղղությամբ իրականացվող հանրային քաղաքականությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով դեպքի վարման գործընթացի արդյունավետության բարձրացմանը։

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է Ալավերդի, Հրազդան, Սևան, Դիլիջան քաղաքներում։ Ուսումնասիրության տվյալները հավաքագրվել է հարցումների, ֆոկուս- խմբային քննարկումների, հարցազրույցների, կարողությունների գնահատման միջոցով։ Ուսումնասիրության հիմնական հենքը հանդիսացել է սոցիալական աջակցության ՀՀ օրենքը, որը ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին։ Ուսումնասիրության արդյունքում պարզվել է հանրային տեղեկացվածության աստիճանը համայնքներում գործող սոցիալական ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև

գնահատվել է սոցիալական ծառայությունների արդյունավետության, այդ ծառայությունները իրականացնող համապատասխան կառույցների կարողությունների, գործունեության, համագործակցության աստիճանը:

Մարդկային աղքատությունը կրճատելու, մարդկային կայուն հարատև զարգացում ապահովելու և որակյալ կյանքի կարևորագույն ու հիմնարար բաղադրիչներից է մարդու առողջ ապրելու իրավունքի երաշխավորումը: Այդ իրավունքի անհրաժեշտությունը ամրագրված է միջազգային մի շարք փաստաթղթերում, որոնց միացել է Հայաստանի Հանրապետությունը: Այսպես, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 125-րդ հոդվածում ամրագրված է, որ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում ապահովելու իրավունք»: Պետության կողմից հստակ սահմանված են սոցիալական պաշտպանության համակարգի գործառույթները, որոնց հիման վրա բնակչության խոցելի խմբերին առաջարկվում են համապատասխան ծրագրեր, ներառյալ.

- պետական սոցիալական աջակցության ծրագրերը,

- սոցիալական ապահովության ծրագրերը,
- սոցիալական պաշտպանության ծրագրերը,
- պետական սոցիալական ապահովագրության ծրագրերը,
- զբաղվածության ծրագրերը:

Պետության կողմից հիմնվել են Սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ, որոնց նպատակներում ներառված են

ա) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հայտնաբերում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սոցիալական աջակցության տրամադրումը.

բ) սոցիալական աջակցության հանրապետական և տարածքային ծրագրերի իրականացման ապահովումն իր սպասարկման տարածքում.

գ) կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը սոցիալական անհատական ծրագրի շրջանակներում, համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը.

դ) խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն ուղեգրելու, ինչպես նաև խնամակալ

ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին.

ե) ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի նախնական նույնացման մասին ընտանեկան բռնության ենթարկված անձանց կացարան տրամադրող կազմակերպությանը.

զ) մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին :

Սոցիալական դեպքի վարման գործընթացի ուսումնասիրություն

I. Հարցումների վերլուծություն

Սույն ուսումնասիրության ընթացքում իրականացվել է հարցումներ շահառուների շրջանում նախօրոք մշակված հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթիկը պարունակում է 17 հարց: Հարցման նպատակն է չափել բնակչության տեղեկացվածության աստիճանը համայնքում գործող սոցիալական ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև գնահատել սոցիալական աջակցություն իրականացնող կառույցների գործունեության արդյունավետությունը, վեր հանել սոցիալական դեպքի վարման գործընթացներում առկա հիմնախնդիրները և մշակել այդ հիմնախնդիրների ուղղությամբ լուծումներ, առաջարկություններ:

Ուսումնասիրությունը իրականացվել է Ալավերդի, Դիլիջան, Սևան, Հրազդան քաղաքներում: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ամփոփ և ընդհանրացված տեսքով: Ուսումնասիրության թիրախ խումբ են հանդիսացել բազմազավակ և սոցիալապես որոշակի խնդիրներ ունեցող ընտանիքներ: Ուսումնասիրությունը իրականացվել է 200 շահառուների շրջանում, որոնց ընտրությունը իրականացվել է պատահականության սկզբունքով: Ուսումնասիրությանը մասնակից շահառուների 75% ունի 4 և ավելի երեխաներ:

Գծագիր 1. Հարցմանը մասնակից բազմազավակ ընտանիքների թիվը, տոկոսներով



Ստորև ներկայացվում է իրականացված հարցումների վերլուծությունը.

Հարց 1. Տեղյա՞կ եք ձեր համայքնում տրամադրվող սոցիալական ծառայություններից

Հարցի նպատակն է պարզելու համայնքում տրամադրվող սոցիալական ծառայությունների վերաբերյալ իրազեկության աստիճանը շահառուների շրջանում: Թիրախ բնակավայրերում տվյալ հարցի շուրջ իրականացված հարցումները ունեն հետևյալ պատկերը, որը ներկայացված է գծագիր 2-ում:

գծագիր2. Իրազեկության աստիճանը սոցիալական ծառայությունների վերաբերյալ, տոկոսներով



Հարցման մասնակիցների 60%-ը նշել է, որ իրազեկ է համայնքում իրականացվող սոցիալական ծառայությունների վերաբերյալ, իսկ 40%-ը իրազեկված չեն: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ իրազեկության մակարդակը սոցիալական ծառայությունների վերաբերյալ բավարար մակարդակի չեն, որպեսզի իրականացվող քաղաքականությունները այս ոլորտում ունենան բարձր մակարդակի արդյունքներ: Հանրային իրազեկությունը նաև կարևոր բաղադրիչ է կոռուպցիայի նվազեցման, թափանցիկության և հաշվետվողականության համար: Անհրաժեշտ է կիրառել հաշվետվողականության առավել արդյունավետ գործիքներ: Սոցիալական ոլորտում հաշվետվողականության բարելավումը կարող են որոշիչ դեր ունենալ կոռուպցիայի դեմ պայքարում, տեղական մակարդակում ծառայություն մատուցողներին հաշվետու

դարձնել համայնքների առջև: Այս գործընթացը պահանջում է քաղաքացիների ներգրավվածություն որոշակի գործողությունների իրականացման մեջ, քաղաքացիների մասնակցությունը կարող է առաջացնել դրական փոփոխություն:

Հարց 1.-ի վերաբերյալ հարցման մասնակիցները որպես պարզաբանում նշել են, որ տեղյակ են նպաստերի տրամադրման ծառայությունից: Ընդհանուր առմամբ հարմանը մասնակիցներից 11 մասնակից է որևէ նշում կատարել, որը կազմում է 7%-ը, մյուսները՝ 93%-ը, որևէ բացատրություն չեն նշել սոցիալական ծառայությունների մասին իրենց տեղեկացվածության վերաբերյալ:

Հարց 2. Օգտվո՞ւմ եք/կամ օգտվել եք/ սոցիալական ծառայություններից

Այս հարցին դրական են պատասխանել 42%-ը, իսկ 58%-ը պատասխանել է, որ չեն օգտվել, ինչպես նշված է գծագիր3.-ում:

Գծագիր3. Սոցիալական ծառայություններում ընդգրկված և չընդգրկված մասնակիցների թվի հարաբերակցությունը, տոկոսներով



Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքի հոդված 4.-ը ահմանում է սոցիալական ծառայություններ հասկացությունը՝

1. Սոցիալական ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են՝ ուղղված՝

1) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի բավարարմանը և (կամ)

2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) բնականոն կենսագործունեության ապահովմանը և (կամ)

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն:

Սակայն մեծամասամբ հանրության շրջանում սոցիալական ծառայությունների դիտարկումը սահմանափակվում է նպաստի կամ դրամական օգնության տրամադրման ծառայությունները, այդ են վկայում այս հարցի վերաբերյալ հարցման մասնակիցների պարզաբանումները: Մասնակիցները հիմնականում նշել են նպաստների համակարգի, դրամական օգնություններից օգվելու կամ այդ համակարգում չընդգրկվելու դեպքերի մասին:

Հարց 3. Ինչպե՞ս կգնահատեք սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացը

Այս հարցին պատասխանելու համար հարցման մասնակիցները ունեին 5 ընտրության հնարավորություն՝

1)շատ լավ

2)լավ

3)բավարար

4)վատ

5)շատ վատ

Գծագիր4. Սոցիալական ծառայությունների գնահատումը՝ տոկոսներով



Ինչպես ցույց տվեց այս հարցի վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը, որը ներկայացված է գծագիր 4.-ում՝ սոցիալական ծառայությունների մատուցման գործընթացը «շատ լավ» գնահատել են հարցման մասնակիցների 7%-ը, «լավ»՝ 30%-ը, «բավարար»՝ 40%-ը, «վատ»՝ 16%-ը, «շատ վատ»՝ 7%-ը: Հարցվածների միայն 37%–ն է սոցիալական ծառայությունների մատուցումը գնահատել «լավ» կամ «շատ լավ», ինչը մատնանշում է, որ ծառայությունների որակի բարելավման համար կարիք կա բարեփոխումներ իրականացնել: Զարգացնել մարդկային ռեսուրսների կարողությունները, ինչպես նաև

գործընթացը ապահովել նյութական և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսներով:

Հարց 4. Երբևէ՞ Ձեր ընտանիքի կարիքների գնահատման և դրանց լուծման խնդիրներով դիմել եք ՏԻՄ-ին

գծագիր5. ՏԻՄ-ին դիմած/չդիմած մասնակիցների թվի հարաբերակցությունը՝ տոկոսներով:



Հարցման մասակիցների միայն 30%-ն է դիմել ՏԻՄ-ին իրենց ընտանիքի կարիքի ուղղությամբ հարցերով, իսկ 70%-ը չի դիմել: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ կարիք ունեցող ընտանիքների և անձանց իրազեկությունը, տեղեկացվածությունը համայնքում սոցիալական ծառայություն տրամադրող, սոցիալական ծրագրեր իրականացնող կառույցների մասին բավարար չէ: Սոցիալական աջակցության ապահովման գործում կարևոր է ՏԻՄ-ի մասնակցությունը կյանքի դժվարին իրավիճակում

հայտնված ընտանիքների բացահայտման, դեպքի վարման, սոցիալական անհատական ծրագրերի իրականացման գործընթացներին: Հարցումները և քննարկումները ցույց են տալիս, որ կարիք կա այս ուղղությամբ նոր արդյունավետ մեխանիզմների մշակման և կիրառման: Ըստ ՀՀ սոցիալական աջակցության օրենքի հոդված 6-ի՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքը սոցիալական ծառայություններ են տրամադրում տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների միջոցով: Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք որոշակի սոցիալական ծառայություններ կարող են տրամադրել միայն տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորված մարմնում հավաստագրելու դեպքում: Սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Տարածքային մարմինները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունները սոցիալական ծառայություններ են տրամադրում՝

1) սոցիալական ծառայությունների տրամադրում հայցող անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և այլ ֆիզիկական անձանց ներկայացրած

տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) սեփական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

Ինչպես նշված է ՀՀ սոցիալական աջակցության օրենքում, սոցիալական ծառայությունները տրմադրվում են ոչ միայն հայցող անձի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա, այլև այլ աղբյուրերից և տարբեր մեթոդների կիրառման միջոցով կարիքավոր ընտանիքների և անձաց վերաբերյալ ունեցած տեղեկատվության և կարիքի գնահատման հիմքով:

Հարց 5. Եթե դիմել եք ՏԻՄ-ին, Ձեր դիմումից հետո ի՞նչ գործողություններ է ձեռնարկել ՏԻՄ-ը, արդյոք Ձեր դիմումն արժանացել է պատշաճ ուշադրության:

Հարցումները ցույց տվեցին, որ ՏԻՄ-ին իրենց խնդիրներով դիմած քաղաքացիների միայն 15%-ն է ստացել իր կարիքի համապատասխան աջակցություն, սակայն ըստ նշված պարզաբանումների՝ դրանք վերաբերվում են հիմնականում դրամական որոշակի աջակցությունների: ՏԻՄ-ից աջակցություն ստացած և չստացած մասնակիցների թվի հարաբերակցությունը ներկայացված է գծագիր 6.-ում:

Գծագիր6. ՏԻՄ-ի աջակցությունը ըստ դիմումների, հարաբերակցությունը՝ տոկոսներով



Հարցման մասնակիցներն իրենց պարզաբանումներում նշվել են հիմնականում դրամական օգնության տրամադրման մասին: Օրինակ՝ համայնքապետարանը որոշակի գումար է հատկացրել վիրահատության համար կամ ուսումնասիրվել է հարցը և տրամադրվել է որոշակի դրամական օգնություն: Սակայն հարցման մասնակիցների գրավոր պարզաբանումներից և ոչ մեկում չկա դիմող անձի կամ ընտանիքի սոցիալական դեպքի վարման գործընթացի իրականացման, ընտանիքի կարիքների վեր հանելու, սոցիալական անհատական ծրագրեր մշակելու և իրականացնելու վերաբերյալ նշումներ: Սա նշանակում է, որ ՏԻՄ-երի մասնակցությունը դեպքի վարման գործընթացին անհրաժեշտ է ընդլայնել:

Հարց 6. Ճանաչո՞ւմ եք արդյոք ձեր համայնքի սոցիալական աշխատողին

Այս հարցին հարցման մասնակիցների միայն 31%-ն է պատասխանել դրական, իսկ 69%-ը նշել են, որ չեն ճանաչում: Տվյալները ներկայացված են գծագիր 7.-ում: Այս տվյալները ցույց են տալիս, որ դեպքի վարման գործընթացները համայնքներում բարելավման կարիք ունի: ՏԻՄ-երի և ՍԱՏԳ-ների համագործակցությունը, ինչպես նաև այլ շահագրգիռ կառույցների և կազմակերպությունների համատեղ աշխատանքի պլանավորման, սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման կարիքը մեծ է: Շատ կարևոր է սոցիալական ծառայությունների տարբեր փուլերում շահառուների լայն մասնակցության ապահովումը, պարբերաբար համայնքներում հաշվետվողականության և տեղեկատվության տարածման գործողությունների իրականացումը: Սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում հանրային իրազեկության բարձրացմանը ուղված գործողությունները նույնպես արդյունավետ կլինեն: Գծագիր7. Համայնքի սոցիալական աշխատող, տվյալները՝ տոկոսներով



Հարց 7. Ի՞նչ խնդիրների դեպքում պետք է դիմել սոցիալական դեպք վարողին

Հարցման մասնակիցների 49%-ը նշել է, որ տեղյակ է ինչ խնդիրների դեպքում պետք է դիմել, սակայն ունեք 51% բացասական պատասխան, ինչպես ներկայացված է գծագիր 8.-ում: Հարցման մասնակիցների իրազեկությունը, սոցիալական դեպք վարման գործընթացի վերաբերյալ բավարար աստիճանի վրա չէ: Հաճախ կարիքավոր ընտանիքները իրազեկ չեն, թե ինչ խնդիրներով, որ կառույցին պետք դիմել: Շահառուների շրջանում առկա են ընդհանուր իրազեկության բարձրացման խնդիրներ, կան նաև սոցիալական դեպքի վարման գործընթացները ավելի արդյունավետ և մասնակցային իրականացնելու հիմնախնդիրներ:

Գծագիր8. Տեղեկացվածությունը սոցիալական դեպք վարողին դիմելու վերաբերյալ՝ տոկոսներով



Հարցման մասնակիցները սոցիալական ծառայության դիմելու համար նշել են հետևյալ դեպքերը՝

- ✓ Սոցիալական անապահովություն
- ✓ Ծնողազուրկ երեխաների խնդիրներ
- ✓ Հաշմանդամության հետ կապված խնդիրներ
- ✓ Միայնակ ծերերի խնդիրներ
- ✓ Գործազրկության խնդիրներ
- ✓ Բազմազավակության հետ կապված խնդիրներ
- ✓ Իրավունքների չիմացության խնդիրներ, խորհրդատվության կարիք
- ✓ Նպաստների հետ կապված խնդիրներ

ՀՀ սոցիալական աջակցության օրենքում սահմանվում է սոցիալական կարիքը, որի ուղղությամբ իրականացվում է սոցիալական դեպքի վարումը։ Սոցիալական կարիքը, որի դեպքում պետք է դիմել սոցիսլական ծառայություն սահամանվում է որպես կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի)՝ իր սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայություն կամ ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար հիմքերի առկայություն։ Իսկ կյանքի դժվարին իրավիճակ՝ հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ

կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող:

Իրավական օգնությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության կողմից և իրավասությունների շրջանակում օրենքով սահմանված իրավաբանական օգնության կազմակերպումն է:

Հարցման մասնակիցները իրենց պարզաբանումներում նշեցին որոշակի հարցեր, սակայն նրանց մոտ բավարար իրազեկվածություն և տեղեկատվություն չկա ընդհանուր այն լայն շրջանակների մասին, որոնց ուղությամբ նրանք կարող են դիմել սոցիալական ծառայություն աջակցության համար կամ որոնց ուղղությամբ պետք է իրականացվի սոցիալական դեպքի վարման գործընթաց:

Հարց 8. Արդյոք Ձեր ընտանիքը ընդգրկվա՞ծ է նպաստի համակարգում

Գծագիր9. Ընդգրկվածությունը նպաստների համակարգում՝ տոկոսներով



Ինչպես նշված է գծագիր9.-ում ընդահնուր հարցվածների 42%-ը ընդգրկված է սոցիալական նպաստների համակարգում, իսկ 58%-ը ընդգրկված չէ:

Հարց 9. Արդյոք դուք եք դիմել նպաստի նշանակման համար, թե Ձեր ընտանիքը հայտնաբերվել է դեպք վարողի կողմից

Գծագիր9. Կյանքի դժվարին իրավիճակում հայտված ընտանիքների բացահայտում, տոկոսներով



Ինչպես ներկայացված է գծագիր9.-ում հարցման մասնակից սոցիալական ծառայություններից օգտվողների 99%-ը անձամբ է դիմել սոցիալական ծառայություն, միայն 1%–ի դեպքում է, որ կարիքավոր անձ/ընտանիքը բացահայտվել է դեպք վարողի կողմից: Ըստ սոցիալական աջակցության ՀՀ օրենքի պետք է բացահայտում իրականացվի և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի(ընտանիքի) խնդիրների ուղղությամբ համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով: Սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվի գործընթաց, որը ներառում է սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի

ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը՝ նպատակ ունենալով բավարարել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները:

Հարց 10. Արդյոք ձեր տուն կատարվե՞լ է տնայց դեպք վարողի կողմից

Գծագիր10.Տնային այցելություններ՝ տոկոսներով



Ինչպես ներկայացված է գծագիր10.-ում սոցիալական ծառայությունից օգտվողների միայն 27%-ն է նշել, որ իրականացվել է տնային այցելություններ սոցիալական դեպք վարողի կողմից, իսկ 73%-ը նշել է, որ տնային այցելություններ չեն իրականացվել:

ՀՀ սոցիալական աջակցության օրենքը ներառում է տնային այցելությունների իրականացման վերաբերյալ դրույթներ:

Այսպես՝ ՀՀ սոցիալական աջակցության օրենքի **Հոդված 40.-ում և Հոդված 42.–ում նախատեսված է տնային այցելություններ իրականացնելու հետևյալ իրավասությունները՝**

Սոցիալական դեպք վարողը և սոցիալական սպասարկողն իրավունք ունեն կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները։
Ինչպես նշված է նաև հոդված 24.-ում, որը վերաբերում է Տեղական ինքնակառավարման մարմնի լիազորություններին՝ Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին։

ՀՀ սոցիալական աջակցության օրենքի հոդված 22.-ը որը վերաբերվում է Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորություններին նախատեսում է վերոհիշյալ հոդվածի 10-րդ կետում տնային այցելության մեթոդիկան։ Ըստ Հոդված 22.-ի՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը սահմանում է տնային այցելություն կատարելու, սոցիալական դեպքի վարման, տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական ցուցումները։

Սակայն հարցումները ցույց են տալիս, որ տնային այցելությունները մարդկային ռեսուրսների, նյութական և այլ միջոցների անբավարար առկայության պատճառով լիարժեք չափով չեն իրականացվում, ինչը հանգեցնում է սոցիալական դեպքի վարման գործընթացի անարդյունավետությանը և կարիքավոր ընտանիքների կարիքների ոչ լիարժեք գնահատմանը և սոցիալական անհատական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացի անկատարելիությանը:

Հարց 11. Երբևէ՞ ընդդիմացել եք դեպք վարողի այցին ձեր տուն

Ըստ ՀՀ սոցիալական աջակցության օրենքի հոդված29. կետ 4)-ի՝ Սոցիալական աջակցություն ստացողի պարտականությունն է չխոչընդոտել սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից իրականացվող տնային այցելություններին. Ինչպես նաև ըստ կետ 2)-ի ներկայացնել սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ և հավաստի տվյալներ: Սույն հարցման մասնակիցների 99%-ը նշել է, որ երբև է չի խոչընդոտի սոցիալական դեպք վարողի տնային այցելություններին:

Հարց 12. Արդյոք տեղյա՞կ եք, թե ինչ է սոցիալական անհատական ծրագիրը:

Գծագիր11. Սոցիալական անհատական ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածությունը՝ տոկոսներով



Սոցիալական անհատական ծրագիրը շատ կարևոր է դեպքի վարման գործընթացը արդյունավետ իրականացնելու և պատշաճ սոցիալական աջակցությունը ապահովելու համար: Ինչպես նախատեսվում է ՀՀ սոցիալական աջակցության օրենքով սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմվում է **սոցիալական անհատական** ծրագիր, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը: Սակայն ինչպես ցույց է տալիս հարցման արդյունքները, ինչը ներկայացված է գծագիր11.-ում՝ այդ ծրագրի վերաբերյալ

տեղեկատվություն ունեն հարցվածների 4%-ը, իսկ 96%-ը տեղեկություն չունի:

Հարց 13. Ովքե՞ր են ներգրավված Ձեր ընտանիքի անհատական ծրագրի իրականացման գործողություններում:

Այս հարցին չեն պատասխանել հարցվածների 88%, միայն 12%-ն է նշել որոշակի պատասխաններ, Նրանք նշել են անձանց, որոնք կարող են ներգրավված լինել անհատական ծրագրի իրականացման գործընթացներում:

Հարց 14. Արդյոք կատարվե՞լ է կարիքների գնահատում և Ձեր խնդիրը հայտնվել է ՍԱՏԳ-ի, ՏԻՄ-ի կամ մարզպետարանի ուշադրության կենտրոնում:

Գծագիր12. Խնդիրը հայտնվել է ՍԱՏԳ-ի, ՏԻՄ-ի կամ մարզպետարանի ուշադրության կենտրոնում



Ինչպես ներկայացված է գծագիր12.-ում հարցման մասնակիցների 23%-ը նշել են, որ կարիքի գնահատում իրականացվել է իրնց խնդրի բացահայտման գործում, սակայն 77%-ի մոտ կարիքի գնահատում չի իրականացվել: Կարիքի գնահատումը մեծ նշանակություն ունի ինչպես անհատական ծրագրերի մշակման, ընտանիքների իրավունքների պաշտպանության, այնպես էլ ընդհանուր սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում: Կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելմանը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառների վերացմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի ու քաղաքականությունների մշակումը, պլանավորումը նույնպես կախված է դեպքի վարման գործընթացների վերլուծություններից:

Ըստ ՀՀ սոցիալական աջակցության օրենքի հոդված 21.-ի, որտեղ սահմանվում է **սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները՝ ս**ոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ըստ մարզերի և (կամ) տարածաշրջանների քննարկում է առանձին սոցիալական խմբերի ընդհանրական սոցիալական կարիքները և իրականացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառների վերացմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի, միջոցառումների ընթացիկ և վերջնական թիրախավորում՝ ըստ սոցիալական աջակցության ծրագրերի,

միջոցառումների, մարզերի և (կամ) առանձին տարածաշրջանների ու սոցիալական խմբերի և համապատասխան ծրագրերն ընդգրկում հաջորդ տարվա պետական բյուջեում:

Հարց 15. Ի՞նչ գործողություններ են իրականացվել Ձեր խնդրի լուծման համար

Այս հարցին որևէ պատասխան նշել են հարցվածների միայն 27%-ը, որի 20%-ը նշել է, որ իրենց խնդիր չի լուծվել, իսկ մյուս մասը, որը կազմում է 80%-ը՝ հիմնականում որպես իրենց խնդրի լուծում նշել են նպաստի կամ դրամական միջոցների ստացմամը: Հարցվածներից՝ ովքեր գնահատում են անցել, նրանց տրամադրվել է նպաստ, դրամական աջակցություն կամ մերժվել են: Հարցման մասնակիցներից ոչ մեկը չի նշել դեպքի վարման և սոցիալական անհատական ծրագրերի մշակման վերաբերյալ:

Հարց 16. Խնդրում եմ նշել, թե ինչ պատասխան եք ստացել կառույցների կողմից

Հարցվածների 25%-ն է միայն պատասխան նշել, իսկ 75 %-ը որևէ պատասխան չի նշել: Պատասխան նշած մասնակիցների 40%-ը բացասական դիրքորոշում է հայտնել իրենց խնդրի լուծման ուղղությամբ, մյուս 60%-ը նշել են, որ իրենց խնդիրը լուծել է ՍԱՏԳ-ն՝ տրամադրելով նպաստ, կամ ստացել են որևէ ֆինանսական աջակցություն:

II. Ֆոկուս-խմբային քննարկումների վերլուծություն

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացվել է ֆոկուս-խմբային քննարկումներ՝ ՍԱՏԳ աշխատակիցների, ՔՀԿ-ների, ՏԻՄ-երի, խոցելի խմբերի, աջակցող ցանցերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Սույն ուսումնասիրության ընթացքում իրականացվել է 24 ֆոկուս-խմբային քննարկում: Ֆոկուս-խմբային քննարկումների նպատակն է վեր հանել սոցիալական դեպքի վարման գործընթացում առկա խոչընդոտները, դժվարությունները, հիմնախնդիրները: Վեր հանված հիմնախնդիրները կօգտագործվեն ընդհանուր գործընթացը բարելավելու և սոցիալական աջակցության ոլորտում քաղաքականությունների բարեփոխման համար առաջարկների մշակման գործում:

1. ՍԱՏԳ-ների գործունեության, ծառայությունների մատուցման ուղղությամբ իրականացված ուսումնասիրության վերլուծություն

ՀՀ սոցիալական աջակցության մասին օրենքի Հոդված 17.-ը վերաբերվում է տարածքային մարմինների լիազորություններին, այստեղ սահմանվել է հետևյալ պահանջները՝

- *Տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով՝*

- գնահատում է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը (սահմանում տրամադրման ենթակա ծառայությունների համալիրը), ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը.

-անհատական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը. իրականացնում է ընտանիքի սոցիալական գնահատում.

Ինչպես նշված է վերոհիշյալ հոդվածում սոցիալական աջակցություն հայցողների կարիքի գնահատումը օրենքով նախտասված պահանջ է և տարածքային մարմինները պետք է այն իրականացնեն: Ակնհայտ է, որ այստեղ անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ, ինչպես նյութական, այնպես էլ մեթոդական հնարավորություններ, իրականացնելու ընտանիքների գնահատում, ինչպես նաև ապահովելու զարգացման ծրագրի իրականացումը: Սակայն քննարկումները ՍԱՏԳ աշխատակիցների շրջանում ցույց են տալիս, որ այս ուղղությամբ իրականացվող աշխատանքները բավարար չեն շոշափելի արդյունքեր ապահովելու համար: Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցները, որոնք հանդիսանում են ՍԱՏԳ-ների աշխատակիցներ, ընդհանուր առմամբ համակարծիք են, որ կարիքավոր ընտանիքների խնդիրների ուղղությամբ դեպքի վարման գործընթացը անբավարար է, և այստեղ առկա են հետևյալ պատճառները՝

- ՍԱՏԳ աշխատակիցների մոտ թույլ են դեպքի վարման համապատասխան հմտությունները:
- ՍԱՏԳ աշխատակիցները իրականացված տնայցերի արդյունքում գնահատվում են ընտանիքների սոցիալական կարիքները, սակայն նրանց հետ հետագա աշխատանքը սահմանափակվում է նպաստի տրամադրմամբ: Այսինքն իրականացնելով նպաստի տրամադրման գործառույթներ՝ ՍԱՏԳ աշխատակիցները չեն կարողանում զբաղվել դեպքի վարման գործընթացով: Տնայցերի ժամանակ սահմանափակվում են կարիքի գնահատմամբ, սակայն զարգացման ծրագրեր և խնդիրների լուծման պլանավորում չեն իրականացնում:
- Դեպքի վարման արդյունավետ իրականացման խոչընդոտ է նաև տրանսպորտային միջոցների սղությունը, այսինքն դեպք վարելու համար աշխատակիցները ապահովված չեն փոխադրամիջոցներով այցեր իրականացնելու համար:

➢ *Տարածքային մարմինը մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.*

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցները՝ ՍԱՏԳ աշխատակիները մեծամասամբ նշում են, որ չեն մասնակցել նմանատիպ ծրագրերի մշակմանը կամ իրենց մասնակցությունը

սահմանափակվել է միայն տեղեկատվություն տրամադրմամբ։ Համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին մեծ ազդեցություն կարող է թողնել համայնքներում սոցիալական իրավիճակի բարելավմանը, այս առումով համայնքային ծրագրերի մշակմանը, իրականացմանը և դրանց ազդեցության գնահատման պրոցեսին անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսների ներդրմամբ։

- *Սոցիալական տարածքային գործակալությունը աջակցում է դիմողին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը.*

ՍԱՏԳ աշխատակիցները նշում են, որ իրենց գործակալություններ դիմում են քաղաքացիներ, որոնք ունեն առողջական խնդիրներ, և նրանք այդ անձանց ուղղորդվում են համապատասխան կառույցներ՝ բժշկական ուղեգիր, բժշկական օգնություն կամ բժշկական վճարների զեղչեր ստանալու նպատակով։ Հաճախ առաջ է գալիս շահառուների իրավունքների պաշտպանության խնդիրներ բժշկական հաստատություններ դիմելու ժամանակ։ Սակայն ՍԱՏԳ աշխատակիցները բոլոր դեպքերում չէ, որ կարողանում են աջակցել բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրականացումը։ Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է բարձրացնել ՍԱՏԳ աշխատակիցների կարողությունները, իրազեկությունը բժշկական օգնության առկա

հնարավորություններից շահառուների օգտվելու իրավունքները պաշտպանելու, իրացնելու ուղղությամբ: Այս խնդիրների լուծմանը կնպաստի նաև օրենսդրորեն ՍԱՏԳ աշխատակիցների մասնակցության հնարավորությունների ընդլայնումը իրենց շահառուների շահերի պաշտպանության իրականացման համար բժշկական հաստատություններում և համապատասխան ընթացակարգերի ներդրումը, որը հնարավորություն կտա ավելի արդյունավետ պաշտպանել իրենց շահառուների շահերը տարբեր բժշկական հաստատություններում: Այս հարցի պատասխանները նույնպես ցույց են տալիս, որ դժվար իրավիճակում գտնվող ընտանիքները և անձինք մեծամասամբ իրենք են դիմում ՍԱՏԳ, և այդ ընտանիքների բացահայտման արդյունավետ մեթոդների կարիքը առկա է, ինչը խոչընտոտում է ընդհանուր գործընթացը արդյունավետ դարձնելուն:

- *Տարածքային մարմինը հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ՝ նրա դիմելու դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ.*

Քննարկումները ցույց են տալիս, որ այս ուղղությամբ ՍԱՏԳ –ները պասիվ են և շատ քիչ դեպքերում են իրականացնում սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանության գործողություններ: Այս ուղղությամբ առկա է կարողությունների ցածր մակարդակ և սեփական նախաձեռնության պասիվություն: Շահառուների

օրինական շահերի և իրավունքների պաշտպանության գործընթացը անհրաժեշտություն ունի ավելի մանրամասն պարզաբանման և հստակեցման, թե ինչ մեթոդներով և ինչ ուղություններով, ինչ օրենսդրական ընթացակարգերով պետք է իրականացնել, ավելի արդյունավետ կլինի ընդլայնել ՍԱՏԳ աշխատակիցների լիազորությունները այս ուղղությամբ՝ հանդես գալու որպես իրենց շահառուների շահերի պաշտպաններ, տարբեր կառույցներում ներկայացնելու իրենց շահառուներին:

- *Տարածքային մարմինը համագործակցում է աջակցող ցանցի հետ.*

Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ: Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին: Լիազորած պետական

մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Քննարկման մասնակիցները նշում են, որ մեծամասամբ ՍԱՏԳ-ների և սոցիալական ցանցերի միջև համագործակցության նախաձեռնություններ հազվադեպ են իրականացվել, հետևաբար համագործակցությունը առաջկցող ցանցի և ՍԱՏԳ-ների հետ կարելի է ասել շատ ցածր մակարդակի վրա է: Համագործակցության առումով շատ քիչ դեպքերում են հաղորդակցվում ցանցերը և ՍԱՏԳ-ները , այն էլ ինչպես մասնակիցները նշում են, որ համագործակցությունը սահմանափակվում է նիստերի ընթացքում դեպքերի քննարկմամբ և որոշ տնայցերի իրականացմամբ, սակայն շարունակական համագործակցությունը բացակայում է:

Սոցիալական խնդիրների լուծումը, կարիքի գնահատումը դեպքերի վարումը և սոցիալական անհատական ծրագրերի իրականացումը և գնահատումը առանց աջակցող ցանցի համագործակցության և ցանցի անդամների աջակցության առկա պայմանաներում արդյունավետ չի կարող իրականացվել:

- *տարածքային մակարդակով կազմակերպում է սոցիալական համագործակցության համաձայնագրի ընդունման գործընթացը.*

Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներ նշում են, որ համագործակցության համաձայնագիրը ստորագվել են, սակայն որևէ գործընթաց չի իրականացվել և այն մնացել է միայն թղթի վրա։ Այսինքն համաձայնագրերը ֆորմալ բնույթ են կրում և արդյունավետորեն չեն նպաստում ընդհանուր գործընթացին։ Սոցիալական համագործակցության համաձայնագիրն ընդունվում է ազգային և տարածքային մակարդակներում: Ըստ սոցիալական աջակցության՝ ՀՀ օրենքի պահանջների այս համաձայնագիրը կարևոր է սոցիալական աջակցության նպատակների իրականացման համար, քանի որ այն ներառում է համագործակցության նպատակներն ու սկզբունքները, կողմերի պարտավորությունները, համակարգող խորհրդի ձևավորման, ինչպես նաև պարտավորությունների կատարման հսկողության և դրանց չկատարման դեպքում համապատասխան միջոցառումների իրականացման մեխանիզմները: Համագործակցության նպատակների իրականացումը ընդգրկում է գործողությունների լայն շրջանակ և այն մեծ կարևորություն ունի սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական տրամադրման ապահովման համար, ինչպես նաև այնպիսի գործոնների ինչպիսիք են՝

- սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտումը, բացասական ազդեցության չեզոքացումը.

- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությունը և նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը.
- սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, դրանց որակի բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով.
- սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը.
- ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումը.
- արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծումը.
- աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը.

- սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացումը.
- վստահության մթնոլորտի ձևավորումը:
- Համագործակցության հիմնական սկզբունքներն են համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունը:
- ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից իրենց հնարավորությունների շրջանակում
- առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:
- համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.
- առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ սոցիալական անհատական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

Համաձայնագրում կարող են ներառվել ՀՀ սոցիալական աջակցության օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին չհակասող այլ նպատակներ, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ:

- *Տարածքային մարմինը կատարում է անձանց ընդունելություն՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն.*

Քննարկման մասնակից ՍԱՏԳ աշխատակիցները նշեցին, որ յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում նրանք կատարում են անձանց ընդունելություն՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն: Ընդհանուր առմամբ այս գործընթացը իրականացվում է և քաղաքացիները հնարավորություն ունեն այցելել տարածքային մարմիններ ստանալու իրենց հուզող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն: Այնուամենայնիվ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման նպատակը անհրաժեշտ ազդեցության հասնելն է : Այս առումով առավել արդյունավետ կլինի օգտագործել տարբեր մեթոդներ, նախ բացահայտելու կարիք ունեցող անձաց կամ ընտանիքներին, այնուհետև օգտագործել ինֆորմացիայի տարածման տարբեր մեթոդներ, ուղիներ և ձևեր՝ դիտարկելով նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները:

- Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրում է զբաղվածության ծառայություններ.

ՍԱՏԳ դիմած քաղաքացիների զբաղվածության խնդիրների վերաբերյալ ՍԱՏԳ աշխատակիցների կողմից իրականացվում է միայն ուղղորդում դեպի զբաղվածության տարածքային

գործակալություն: Սակայն այլ գործողություններ՝ կապ մասնավոր հատվածի հետ կամ համայնքում աշխատատեղերի վերաբերյալ տվյալների բազայի վարում, որոնում չի իրականացվում:

2. Աջակցող ցանցի գործունեության վերլուծություն

Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք միանում են կամավոր հիմունքներով:

Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքներն են՝

1) ստանալ տեղեկատվություն աջակցող ցանցի մյուս մասնակիցներից՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից իրենց հնարավորությունների շրջանակում

3) առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:

Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են՝

1) իրազեկել աջակցող ցանցի մյուս մասնակիցներին իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) արագ արձագանքել սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը, ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումանը.

3) մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4) համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

5) առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ սոցիալական անհատական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

- աջակցող ցանցի անդամների իրազեկության բարձրացում իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների վերաբերյալ:

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցները նշեցին, որ ընդհանուր առմամբ աջակցող ցանցի ամսական նիստերը իրականացվում են: Աջակցող ցանցի նիստերի ընթացքում

իրականացվում են օրակարգով նախատեսված հարցերի քննարկում, ինչպես նաև ցանցի անդամները իրազեկվում են առկա ռեսուրսների և տրամադրվող սոցիալական ծառայությունների, այլ ծրագրերի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ կարելի է գնահատել, որ այս կետը իրականացվում է, սակայն սոցիալական ծրագրերի ազդեցության և դրանց արդյունավետության գնահատման վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր կարող են լինել ցանցի աշխատանքների արդյունավետության բարձրացման առումով:

- *Մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.*

Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնք(ներ)ի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա:

Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

Տեղական սոցիալական ծրագրերը կարող են կազմվել մեկ համայնքի կամ մեկից ավելի համայնքների կողմից համատեղ՝ ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական սոցիալական կարիքների բավարարման նպատակով:

Տեղական սոցիալական ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:

- Տեղական սոցիալական ծրագրերը կարող են ֆինանսավորվել՝

1) համայնքի բյուջեի միջոցներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից.

3) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

Տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվում է ՀՀ սոցիալական աջակցության օրենքով սահմանված սկզբունքների համաձայն, համայնքի ավագանու հաստատած կարգով՝ սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագրին համապատասխան:

Համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին մասնակցությունը ըստ

քննարկմանը մասնակից անդամների՝ չի իրականացվում: Մասնակիցները նշում են, որ իրենք բնականաբար տեղյակ են համայնքի կարիքների մասին, սակայն երբևէ չեն մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակմանը և անգամ տեղյակ չեն, թե ովքեր են մասնակցում և ինչ ձևով է իրականացվում:

Տեղական սոցիալական ծրագրերի մշակումը և իրականացումը շատ կարևոր է ընդհանուր սոցիալական իրավիճակի բարելավման և սոցիալական կարիքների բավարարման ուղղությամբ, այստեղ անհրաժեշտ են համապատասխան մարմինների պատասխանատվության բարձրացման միջոցառումներ իրականացնել՝

- Համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

Մասնակիցները նշում են, որ ՍԱՏԳ աշխատակիցների հետ համատեղ իրականացնում են տնայցեր՝ իրավիճակին տեղյակ լինելու նպատակով, սակայն իրականացվող հետագա աշխատանքներին չեն մասնակցում: ՍԱՏԳ աշխատակիցները իրենց հիմնական գործառույթը համարում են ոչ թե դեպքի վարումը, այլ նպաստի տրամադրումը: Մասնակիցները ունեն նաև այնպիսի կարծիքներ, որ դեպքի վարում չի իրականացվում ՍԱՏԳ աշխատակիցների կողմից, միայն իրականացվում է նպաստի տրամադրման համար նախատեսված տնայցեր, այսինքն իրականացնելով նպաստի տրամադրման գործառույթները ժամանակային և այլ ռեսուրսների բացակայության պատճառով դեպքի վարման գործընթացները

չեն իրականացվում: Ընդհանուր առմամբ դեպքի վարման գործընթացը ցածր մակարդակի վրա է և աջակցող ցանցի համագործակցությունը և աջակցությունը նույնպես անբավարար է:

- Առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ սոցիալական անհատական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

Քննարկումները բացահայտում են, որ սոցիալական անհատական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար առաջարկությունների փաթեթ կամ հիմնավորված առաջարկություններ չեն ներկայացում, սակայն կան դեպքեր, երբ մասնակիցները հանդես են գալիս բանավոր տարբեր առաջարկություններով՝ ծառայությունների տրամադրումը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով :

3. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ

Տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում՝

1) պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում.

2) սոցիալական աջակցության համայնքային ծրագրերի շրջանակներում.

3) կամավոր լիազորությունների շրջանակներում:

Համայնքի ղեկավարը համագործակցում է աջակցող ցանցի հետ: Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին:

4. Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին:

5. Համայնքի ղեկավարը համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:

- *Համայնքի ղեկավարը համագործակցում է աջակցող ցանցի հետ:*

Ընդհանուր առմամբ ուսումնասիրության տվյալներով համայնքների ղեկավարները մեծամասամբ

համագործակցում են աջակցող ցանցի հետ՝ ներգրավելով ցանցում համայնքապետարանի ներկայացուցչի: Սակայն կան դեպքեր, երբ համայնքապետարանը և ՍԱՏԳ-ները գործում են իրարից անկախ և բացակայում է նրանց համագործակցությունը: Ցանցի և համայնքի ղեկավարի համագործակցությունը առավել արդյունավետ դարձնելու համար, անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի միասնական մոտեցումների մշակում և ընդհանուր փոխկապակցված գործողությունների և ռեսուրսների համատեղման պլանավորում:

- *Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին:*

Ֆոկուս-խմբային քննարկումը ցույց տվեց, որ համայնքներում աղքատ, կամ սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց կամ ընտանիքների հայտնաբերման առավել գործուն և արդյունավետ մեխանիզմներ մշակված չեն և կարիք ունեցող անձաց կամ ընտանիքների հայտնաբերումը կատարվում է առկա ինֆորմացիայի կամ շահառուների դիմումների հիման վրա: Հաճախ, երբ քաղաքացիները սոցիալական հարցերով դիմում են համայնքապետարան, այդ դեպքերում

համայնքապետարանը նրանց ուղղորդում է ՍԱՏԳ: Որոշ դեպքերում համայնքապետարանի ներկայացուցիչը, ով ընդգրկված է աջակցող ցանցում, ցանցի անդամների հետ իրականացնում է տնայցեր, սակայն այդ աշխատանքը շարունակական բնույթ չի կրում: Երբեմն պարզվում է, որ համայնքապետարանի սոցիալական աշխատողը մշակույթի բաժնի աշխատակից է, ում վերապահվել են նաև սոցիալական աշխատողի գործառույթները, ինչը անարդյունավետ է դարձնում գործընթացը: Հաճախ համայնքապետարանում կարիքավոր ընտանիքների աջակցությունը դիտում են, որպես դրամական աջակցություն, և պարբերաբար իրենց դիմած քաղաքացիներին աջակցում են որոշակի գումարով:

Այսպիսով կարիքավոր ընտանիքների հայտնաբերման գործընթացում ՏԻՄ-ի աջակցության կարիքը մեծ է և դրա վերաբերյալ օրենքի կետի իրականացումը ընթացակարգային բնույթ կրելով՝ կարող է մեծ նպաստ բերել սոցիալական աջակցության, դեպքի վարման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, սոցիալական ծառայությունների բարելավմանը:

- *Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին:*

Ըստ մասնակիցների քննարկումների՝ այս կետը իրականացվում է մասամբ և այստեղ բարելավման կարիքը առկա է: Լինում են

դեպքեր, երբ համայնքապետարանը մշակույթի բաժնի աշխատակիցներից մեկին վերապահում է սոցիալական աշխատողի պարտականությունները, ով սոցիալական աշխատողի կարողություններ չունի, ընդգրկված չէ աջակցող ցանցում և երբևիցե տնայց չի իրականացրել: Համայնքապետարանի մեկ այլ ներկայացուցիչ, ով ընդգրկված է աջակցող ցանցում, երբեմն տնայցեր է իրականացնում համատեղ ցանցի այլ անդամների հետ, սակայն համայնքապետարանի աջակցությունը միայն դրամական է լինում: Մի շարք դեպքերում համայնքապետարանը, չունենալով սոցիալական աշխատող, չի կարողանում իրականացնել դեպքի վարման գործընթացներ: Սակայն կան նաև համայնքեր, որտեղ տնայցեր իրականացվում են համայնքի սոցիալական աշխատողի կողմից, ընտանիքի կարիքը գնահատվում է և անհրաժեշտության դեպքում ընտանիքի հետ տարվում են դեպքի վարման շարունակական աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, այդ պահանջը իրականացվում է մասամբ, այն կախված է համայնքից և համայնքապետարների ակտիվությունից և պատասխանատվությունից: Սակայն այստեղ կան պլանավորման, ընթացակարգերի ներդրման խնդիրներ կապված բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության և համայնքի տարբեր կառույցների ներգրավման հետ: Հատկապես կարևոր է դեպքի վարման գործընթացում ՏԻՄ-երի և ՍԱՏԳ-ների համագործակցությունը գործուն մեխանիզմներով իրականացնելը:

- *Համայնքի ղեկավարը տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:*

Համայնքապետարանների կողմից սոցիալական ծրագրերի մշակման պրոցեսում տարածքային մարմինների մասնակցությունը հիմնականում ցածր մակարդակի վրա է: Համայնքապետարանները տարածքային մարմնի աշխատակիցներից որոշակի ինֆորմացիա են ստանում՝ սոցիալական աջակցություն ստացողների հետ կապված: Առավել ևս այդ ծրագրերի իրականացման և ընդունման պրոցեում տարածքային մարմինները գործուն մասնակցություն չունեն: Համայնքում սոցիալական ծրագրերի արդյունավետ մշակման և իրականացման գործում կարևոր է լայն մասնակցության ապահովումը, ընդգրկելով գործընթացին նաև շահառուներին:

- *Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ:*

Քննարկումների արդյունքում պարզվեց, որ համագործակցությունը իրականացվում է մասամբ: Մասնակիցները նշել են, որ համագործակցություն առկա է, սակայն ոչ բավարար մակարդակով. համատեղ երբեք չեն մասնակցել ինչ-որ խնդրի քննարկմանը և լուծմանը: Սակայն լինում են դեպքեր, երբ արագ և օպտիմալ ձևով իրականացվում է ինֆորմացիայի փոխանակում և համագործակցության քայլերի նախագծում:

- *Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին:*

  Մասնակիցները նշում են, որ տեղեկատվության փոխանակման շրջանակներում համագործակցության խնդիրներ չեն առաջացել:

  Ըստ քննարկումների համակարգված աշխատանքի բացակայության պատճառով տեղեկատվության փոխանակումը իրականացվում է ըստ անհրաժեշտության:

- *Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական*

ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակից ՀԿ-ներկայացուցիչները նշում են, որ միջգերատեսչական համագործակցության համաձայնագիրը ձևական բնույթ է կրում, պետական կառույցների հետ համագործակցությունն իրականացվում է անձնական կապերի շնորհիվ:

- *Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համագործակցությունն իրականացվում է աջակցող ցանցի միջոցով՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրի հիման վրա: Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) միանում են կամավոր հիմունքներով:*

Ֆոկուս-խմբային քննարկման մասնակիցներից որոշները նշել են, որ իրենք աջակցող ցանցի անդամ են, մասնակցում են նիստերին, սակայն դրանք ձևական բնույթ են կրում, իսկ ցանցին չանդամագրված մասնակիցները ընդհանրապես տեղյակ չեն

աջակցող ցանցի գործունեությունից և երբևէ չեն համագործակցել:

- Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

Մասնակիցները փաստում են, որ երբեք չեն մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման գործընթացին:

4. **Խոցելի խմբերին պատկանող ընտանիքներ/անձեր**

- *Սոցիալական աջակցություն հայցող անձը այն ստանալու համար անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ իր բնակության վայրի տարածքը սպասարկող տարածքային մարմնին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:*

Ընդհանուր առմամբ քաղաքացիները խոչընդոտներ չեն տեսնում, երբ դիմում են սոցիալական աջակցության մարմիններին նպաստ ստանալու կամ այլ աջակցության համար: Նրանք հնարավորություն ունեն դիմելու և ստանալու պատասխան:

- *Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու իրավազորություն ունեցող տարածքային մարմինը կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող համապատասխան կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով*

Քննարկման մասնակիցների կարծիքով տվյալ գործառույթը՝ սոցիալական աջակցություն տրամադրելու կամ մերժելու որոշումը ընդունում են տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու իրավազորություն ունեցող տարածքային

մարմինը և տրմադրում են պատասխանը դիմողին, սակայն հաճախ քաղաքացիները իրենք են դիմում և վերցնում պատասխանները։

- *Սոցիալական աջակցություն հայցող (սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած) անձն իրավունք ունի տարածքային մարմնից ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրականացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին.*

Ըստ ֆոկուս խմբային քննարկումների տվյալ գործառույթը իրականացվում է մասամբ, հիմնականում քաղաքացիները ստնաում են տեղեկատվություն նպաստների նշանակման հետ կապված, երբեմն իրենց սոցիալական խնդիրների լուծման նպատակով դիմել են տարածքային մարմին, սակայն երբեք բավարար պատասխան չեն ստացել։Սակայն կան քաղաքացիներ, որոնք ՍԱՏԳ տարբեր խնդիրներին դեպքում դիմել են և ստացել անհրաժեշտ խորհրդատվություն և ուղղորդում այլ կառույցներ։

- *Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցելու սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին./աջակցող խորհրդի նիստեր/*

Քննարկման մասնակիցները նշում են, որ երբեք չեն մասնակցել աջակցող խորհրդի նիստերին, որոնք վերաբերվում էին իրենց խնդիրների քննարկմանը: Նրանք կարծիք հայտնեցին, որ հաճախ աջակցող խորհրդի նիստերում դեպքի քննարկում լինում է միայն այն պատճառով, որպեսզի հասկանան պետք է ընտանիքին զրկել նպաստից, թե ոչ: Չեն քննարկվում ընտանիքի սոցիալական անհատական խնդիրները, որոնց էլ պետք է միտված լինի դեպք վարողների աշխատանքին:

5. ՔՀԿ-ների ներգաբավածությունը սոցիալական աջակցության ոլորտում

- *Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, ՀԿ-ների հետ:*

Ըստ քննարկման մասնակիցների՝ կարծիքների համադրման տվյալ համագործակցությունը իրականացվում մասամբ, կախված տարածաշրջանից: Որոշ համայնքում բացակայում է համագործակցությունը պետական կառույց- ՀԿ և նույնիսկ ՀԿ-ների շրջանակներում: Իսկ որոշ համայնքերում համագործակցություն առկա է, արագ և օպտիմալ ձևով իրականացվում է ինֆորմացիայի փոխանակում, տրամադրում և համագործակցության քայլերի նախագծում: Սակայն որոշ

դեպքերում համագործակցություն առկա է, սակայն ոչ բավարար մակարդակով. համատեղ հաճախ չեն մասնակցել խնդիրների քննարկմանը և լուծմանը:

- *Լիազորված պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին:*

Ընդհանուր առմամբ ըստ քննարկման մասնակիցների՝ տեղեկատվության փոխանակման խնդիրներ չեն առաջանում, սակայն այն համակարգված բնույթ չի կրում:Մասնակիցները նշում են, որ տեղեկատվության փոխանակման խնդիրները լուծվում են ընկերական միջանձնային հարաբերությունների հիման վրա:

- *Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները համագործակցում են*

այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Քննարկման մասնակիցները նշեցին , որ համագործակցությունը չի իրականացվում և միջգերատեսչական համաձայնագիրը ձևական բնույթ է կրում և գրված է միայն թղթի վրա։

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համագործակցությունն իրականացվում է աջակցող ցանցի միջոցով՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրի հիման վրա: Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) միանում են կամավոր հիմունքներով:

Ընդհանուր առմամբ՝ սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում ՔՀԿ-ների մասնակցությունը ցածր մակարդակի վրա է, որոշ համայնքներում այն բացակայում է: Երբեմն աջակցող ցանցի նիստերը ձևական բնույթ են կրում և գործնական համագործացություն տեղի չի ունենում:

- Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից

դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

Տվյալ գործառույթը իրականացվում է մասամբ, որոշ համայնքերում չի իրականացվում: Որոշ տեպքերում ՔՀԿ ներկայացուցիչները տեղական սոցիալական ծրագրերի մշակմանը մասնակցում են տեղեկատվության փոխանակմամբ և առաջարկությունների ներկայացմամբ: Տեղական սոցիալական ծրագրերի մշակումը և իրականացումը մասնակցային իրականացնելը կարևոր է սոցիալական աջակցության նպատակների իրականացման, հաշվետվողականության համար, և անհրաժեշտ են բոլոր համայնքներում կիրառել մասնակցային արդյունավետ մեթոդներ:

III. ՍԱՏԳ աշխատակիցների դեպքի վարման կարողությունների գնահատում

ՍԱՏԳ աշխատակիցների կարողությունների գնահատման նպատակն է պարզել ՍԱՏԳ աշխատակիցների իրազեկության և կարողությունների մակարդակը՝ դեպքի վարման գործընթացների հետ կապված գործառույթները բարելավելու համար:

Գնահատումը իրականացվել է հարցաթերթի միջոցով գնահատմանը մասնակցել են 20 ՍԱՏԳ աշխատակիցներ: Գնահաատման արդյունքները ներկայացվում է անփոփ: Ստորև ներկայացված են հարցաթերթիկի հարցերը, որոնք լրացրել են ՍԱՏԳ աշխատակիցները և նշված են ճիշտ պատասխան տրված տոկոսային հարաբերակցությունը:

1. **Նշվածներից ո՞րն է համայնքային սոցիալական աշխատանքի խնդիրներից:**
   - ✓ Միավորել համայնքները մեկ ընդհանուր գաղափարի շուրջ,
   - ✓ Ստեղծել օրինագծեր համայնքների մասին և ներկայացնել օրենսդիր մարմին,
   - ✓ **Աջակցել համայնքի բնակիչներին հաղթահարելու սոցիալական հիմնախնդիրները և կանխելու սոցիալական ռիսկերը,**
   - ✓ Աջակցել պետական կառույցներին իրականացնելու համայնքների բարեփոխումներ:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 89% -ը, այսինքն 11% -ը սխալ պատասխանն է նշել:

2. Համայնքում բնակչության ո՞ր խմբերը կարող են օգտվել սոցիալական աշխատողի

ծառայություններից:

- ✓ Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները,
- ✓ Միայնակ տարեցները,
- ✓ Անապահով ընտանիքները,
- ✓ **Բոլոր նրանք, ովքեր ունեն սոցիալական աջակցության կարիք:**

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 67% -ը, այսինքն 33% -ը սխալ պատասխանն է նշել:

3. Ո՞ր կազմակերպությունները կարող են ներառվել համայնքի աջակցության ցանցերի մեջ:

- ✓ Հասարակական կազմակերպությունները,
- ✓ Պետական կառույցները,
- ✓ Մասնավոր կազմակերպությունները,
- ✓ **Բոլոր այն կազմակերպությունները, որոնք շահագրգռված են և ցանկություն են հայտնել ներառվելու աջակցության ցանցերում:**

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 56% -ը, այսինքն 44% -ը սխալ պատասխանն է նշել:

4. Ըստ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ ո՞ր ծրագրի հիման վրա է կազմակերպվում համայնքի բնակիչներին սոցիալական աջակցության տրամադրումը:

- ✓ Կառավարության ծրագրի,
- ✓ Մարզի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրի,
- ✓ Կայուն զարգացման ծրագրի,
- ✓ **Տեղական սոցիալական ծրագրի:**

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 56% -ը, այսինքն 44% -ը սխալ պատասխանն է նշել:

5. **Ըստ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ ո՞ր մարմինն է պատասխանատու տեղական սոցիալական ծրագրի մշակման, ընդունման և իրականացման գործընթացները կազմակերպելու համար:**
   - ✓ Տարածքային կառավարման մարմինը,
   - ✓ **տեղական ինքնակառավարման մարմինը,**
   - ✓ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը,
   - ✓ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 67% -ը, այսինքն 33% -ը սխալ պատասխանն է նշել:

6. **Ըստ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի՝ ի՞նչ պարտականություններ ունի Համայնքային սոցիալական աշխատողը:**
   - ✓ ընտանեկան նպաստ նշանակել սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անձին,

- ✓ սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անձին հաշվառել զբաղվածության ծրագրերում,
- ✓ **միջոցներ ձեռնարկել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և այլ սոցիալական խմբերին հայտնաբերելու ուղղությամբ,**
- ✓ միջոցներ ձեռնարկել համայնքային բյուջե հարկ չվճարող բնակիչներին հայտնաբերել ուուղղությամբ:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 61%-ը, այսինքն 39%-ը սխալ պատասխանն է նշել:

7. **Նշվածներից ո՞րն է աջակցող ցանցի մասնակիցների համագործակցության սկզբունքներից:**
   - ✓ ցանցում շահառուների ակտիվներ գրավումը,
   - ✓ ցանցային համագործակցության ընթացքում պետական մարմինների գերակա դիրքը,
   - ✓ հասարակական կազմակերպությունների կողմից վերահսկողական գործառույթների կատարումը,
   - ✓ **մասնակիցների հավասար պատասխանատվությունը:**

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 50% -ը, այսինքն 50% -ը սխալ պատասխանն է նշել:

8. **Ինչպե՞ս է սահմանվում «կյանքի դժվարին իրավիճակ հասկացությունը:**
   - ✓ մարդու սոցիալական կոմպետենտության աճին բերող իրավիճակ,

- ✓ **մարդու կենսագործունեությունը խթանող օբյեկտիվ իրավիճակ,**
- ✓ մարդու կենսագործունեությունը խաթարող օբյեկտիվ իրավիճակ, որը նա ինքնուրույն հաղթահարել չի կարող,
- ✓ հասարակական կյանքում առաջացած ճգնաժամեր, որոնք սոցիալական ինստիտուտներն ինքնուրույն հաղթահարել չեն կարող:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 6% -ը, այսինքն 94% -ը սխալ պատասխանն է նշել:

9. Ո՞րն է երեխայի լավագույն շահը:

- ✓ ցանկացած պարագայում ընտանիքում մեծանալը:
- ✓ **ընտանիքում մեծանալը, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտանիքում նրա կյանքին և առողջությանը լուրջ վտանգ է սպառնում:**
- ✓ ընտանիքում մեծանալը, բայց միայն այն դեպքում, երբ ընտանիքը կարող է ապահովել նրա հիմնական պահանջմունքների բավարարումը:
- ✓ այն միջավայրում մեծանալը, որտեղ կբավարարվեն նրա հիմնական պահանջմունքները:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 39% -ը, այսինքն 61% -ը սխալ պատասխանն է նշել:

10. Ի՞նչ է սոցիալական դեպքի քննարկումը:

- ✓ **մասնակցային, միջդիսցիպլինար գործընթաց, որի նպատակն է արդյունավետ և համագործակցային դարձնել շահառուի հետ աշխատանքը,**
- ✓ մասնակցային, միջ դիսցիպլինար գործընթաց, որի նպատակն է թիրախ խմբերին ներկայացնել առկա հիմնախնդիրները,
- ✓ մասնակցային, միջդիսցիպլինար գործընթաց, որի նպատակն է գործընկերներին ներկայացնել հաջողված դեպքեր,
- ✓ մասնակցային, միջդիսցիպլինարգոր ծընթաց, որի նպատակն է գտնել ձախողված դեպքերի պատճառները:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 94%-ը, այսինքն 6%-ը սխալ պատասխանն է նշել:

11. Ի՞նչ եք հասկանում կարիքի գնահատում ասելով.

Հետազոտական և ճանաչողական գործընթաց, որի ժամանակ սոցիալական աշխատանքի մասնագետը շահառուի ակտիվ մասնակցությամբ բացահայտում է վերջինիս կարիքները, դժվարությունների բնույթը և այն միջոցները, որոնք կարող են օգնել հաղթահարելու խնդրահարույց իրավիճակը:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 22%-ը, այսինքն 78%-ը սխալ պատասխանն է նշել:

12. Ի՞նչ է սոցիալական անհատական ծրագիրը(ԱԶԾ)

Սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմված ծրագիր, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի վարման շարունակական հսկողության ժամանակացույցը:

Այս հարցին ճիշտ պատասխան են տվել հարցվածների 11%-ը, այսինքն 89%-ը սխալ պատասխանն է նշել:

Վերլուծելով թեսթի մասնակիցների ընդհանուր միջինացված ճիշտ պատասխանների տոկոսային աստիճանը հավասար է 58%-ի, իսկ սխալ պատասխանների միջին տոկոսը համապատասխանաբար հավասր է 42%-ի: Ամենցածր տոկոսը ճիշտ պատասխանների դա 8-րդ հարցն է 6%, որը բավականին ցածր ցուցանիշ է, իսկ ամենաբարձր տոկոսը 10-րդ հարցը 94%, ցածր տոկոսային ցուցանիշ է գրանվել նաև 9,11,12 հարցերի դեպքում: Այս հարցերը վերաբերվում են երեխայի լավագույն շահի պարզաբանմանը, կարիքի գնահատմանը և սոցիալական անհատական ծրագրին: Տվյալ ցուցանիշները ցույց են տալիս որ դեպքի վարման ուղությամբ ՍԱՏԳ աշխատակիցների կարողությունների բարելավման կարիք կա: Ներկայացվում է գրաֆիկական պատկերը, որը ցույց է տալիս համապատասխան հարցերի ճիշտ պատասխանների ցուցանիշները տոկոսներով:

Գծագիր13. Կարողությունների գնահատման գրաֆիկ, տոկոսներով



IV. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների կարիքների ուսումնասիրություն

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացվել են 20 ընտանիքի կարիքի գնահատում: Ուսումնասիրված ընտանիքներում մեծամասամբ առկա էր կենցաղավարման և ծնողավարման ցածր մակարդակ: Կային իրավունքների խախտման, գործազրկության, ծայրահեղ աղքատության դեպքեր: Դեպքերի քննարկումների ընթացքում շահագրգիռ կողմերը իրենց պատրաստակամությունը հայտնեցին ընտանիքների խնդիրների լուծման գործում: Խնդիրների մեծամասնությունը համայնքային մակարդակում լուծելի էին: Շահագրգիռ կողմերում ներգրավված էին տարբեր կառույցների ներկայացուցիչներ՝ ՁՏԿ, ՀԿ-ներ, ՍԱՏԳ, Համայնքապետարան, ԲՍՓՀ, Հոգեկան Առողջության Կենտրոն: ՍԱՏԳ աշխատակիցների հետ տնայցերի ընթացքում պարզ դարձավ, որ իրենց ծանրաբեռնվածության հետևանքով լիովին չեն կարողանում ընդգրկվել դեպքի վարման գործընթացում, չունեն դեպքի վարման համար նախատեսված հատուկ գործիքակազմ: Համակարգող

խորհուրդը հիմնականում քննարկում է այլ բազաներից ստացված տեղեկության արդյունքները, որի հիման վրա որոշում է կայացնում՝ նպաստի նշանակում կամ կասեցում:

Ուսումնասիրությունը ցույց է տվեց, որ սոցիալական աջակցության տարածքային գործակալության դեպք վարողներ աշխատակիցները և համայնքային սոցիալական աշխատողները ունեն վերապատրաստումների կարիք, և չեն կարող համատեղել դեպքի վարումը, նպաստի նշանակումը, ինչպես նաև վերապահված այլ գործառույթներ:

V. Առաջարկություններ

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացված հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների, գնահատումների, մարզային քննարկումների արդյունքում վեր են հանվել հետևյալ առաջարկությունները՝

I. **Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (ՍԱՏԳ), դեպքի վարման հետ կապված առաջարկություններ**

1. **Ընդհանուր վիճակագրական բազայի ստեղծում տարեկան արդյունքների համեմատում և հանրային հաշվետվության ներկայացում։**

Իրականացնել համայնքային, մարզային, հանրապետական մակարդակներում վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություններ։ Տվյալների վերլուծության վերաբերյալ հանրային հաշվետվության ներկայացումներ հանրությանը տեղական, մարզային և հանրապետական մակարդակներում՝ համապատասխան պատասխանատուների կողմից։ Մշակել համապատասխան մեթոդոլոգիա և ձևաչափեր արդյունավետ տվյալների հավաքագրման գործընթաց իրականացնելու համար։ Ներդնել էլեկտրոնային ծրագրային ապահովում առավելագույնս ավտոմատացնելու գործընթացը։

Ստեղծել սոցիալական ծառայությունների, դեպքի վարման հետ կապված և ներգրավված բոլոր կառույցների համատեղ օգտագործվող և լրացվող տվյալների բազա ինտերնետ

տիրույթում: Բազան պետք է ունենա օնլայն մուտքի հնարավորություն և պարբերաբար լրացնելով՝ կարելի կլինի տարեկան տվյալները հավաքագրել և վերլուծություններ իրականացնել՝ կապված սոցիալական աջակցության բոլոր ցուցանիշների և արդյունքների հետ: Էլեկտրոնային համակարգը կարող է այնպես ծրագրավորել, որ այն մեծամասամբ վերլուծություններ իրականացնի մեխանիկորեն: ՍԱՏԳ-ի, կամ այլ կառույցների կողմից յուրաքանչյուր տարի դեպքերի վարման վերաբերյալ իրականացնել քանակական և որակական վերլուծություններ: Հաշվետու ներկայացումները առավել արդյունավետ կլինեն սոցիալական ծառայություններում ներգրաված կառույցների համատեղ իրականացման դեպքում: Հանրային ներկայացումները կնպաստեն սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների թափանցիկության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև կբարձրացնի հանրային իրազեկությունը և առկա խնդիրների լուծման գործընթացներում մասնակցության աստիճանը:

2. **Դեպքի վարման գործընթացում կիրառել առավել օբեյկտիվություն ապահովող ձևանմուշներ, սահմանել չափորոշիչներ:**

Սահմանել հստակ, իրատեսական, ՀՀ առկա սոցիալական իրավիճակին համապատասխանող չափորոշիչներ՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքի կարիքի գնահատման համար: Մշակել մեթոդաբանություն կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների կարիքների բացահայտման, պատճառահետևանքների վերհանման և

համապատասխան լուծումների մշակման համար: Ներդնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների բացահայտման նոր մեխանիզմներ: Ապահովել համայնքում գործող տարբեր կառույցների համագործակցությունը զարգացնող էլեկտրոնային հնարավորություններ, կիրառել այլ մեթոդներ, զարգացել համատեղ օգտագործման էլեկտրոնային համակարգ, որը թույլ կտա բացահայտել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող նոր ընտանիքներ: Ազդարարման համակարգին մասնակցությունը տարբեր կառույցների, անհատների, ակտիվ խմբերի կողմից կբարձրացնի կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների բացահայտման գործընթացի արդյունավետությունը: Պարբերաբար իրականացնել համայնքում գործող տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, այցելություններ այդ կառույցներ տվյալների հավաքագրման համար: Սահմանել ամսական տվյալների տրամադրման համակարգ, որի միջոցով համայնքում գործող շահագրգիռ կառույցները տվյալներ կփոխանցեն կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների բացահայտման ուղղությամբ:

3. **Կիրառել հետևյալ ձևանմուշը կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի/ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական բազմաշահագրգիռ ծրագրի մշակման համար:**

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում մշակվել է կյանքի դժվարին իրավիճակում

գտնվող երեխայի/ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական բազմաշահագրգիռ ծրագրի մշակման համար ձևանմուշ: Այս ձևանմուշի օգնությամբ անհատական ծրագրում ավելի հստակ են ծրագրում ներգրաված կողմերի գործողությունները և պատասխանատվությունները: Ծրագրում շահագրգիռ յուրաքանչյուր կողմ իր սորագրությամբ վավերացնում է իր ստանձնած գործողությունների պատասխանատվությունը:

Ձևանմուշ

ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ/ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱԳՐԳԻՌ ԾՐԱԳԻՐ

Երեխայի հաշվառման համարը _____

Հաշվառման ամսաթիվը_____

1.Երեխայի ազգանունը, անունը, հայրանունը_____
_____

2.Ծննդյան ամսաթիվը_____

3.Երեխայի անձնագրի կամ ծննդյան վկայականի համարը, տալու

ամսաթիվը_____
_____

4.Երեխայի փաստացի բնակության վայրը (հեռախոսահամարը)

_____

_____

5.Երեխայի նախասիրությունները և հմտությունները
_____
_____
_____
6.Երեխայի զարգացման
տարիքը_____

7.Երեխայի կարիքները՝

սոցիալական

Հոգեբանական

Բժշկական

Կրթական

---

4. Լրացուցիչ տվյալներ

Առկա միջավայրի վերլուծություն

Այստեղ նշվում են այն պետական, ոչ պետական, տեղական և միջազգային հաստատությունները և ֆիզիկական անձինք, ովքեր կարող են դերակատարում ունենալ բազմաշահագրգիռ ծրագրի իրականացման ընթացքում:

Յուրաքանչյուր շահագրգիռ կողմին կից նշվում է, թե նա ինչ դերակատարում կարող է ունենալ: Վերլուծությունը կատարվում է հնարավորինս մանրամասն :

---

5. Երեխայի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

1) սոցիալական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Պատասխանատու Հաստատություն	Պատասխանատու անձ	Իրականացման ժամկետ	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ծախսեր	Ոչ ֆինանսական միջոցներ

2) հոգեբանական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Պատասխանատու Հաստատություն	Պատասխանատու անձ	Իրականացման ժամկետ	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ծախսեր	Ոչ ֆինանսական միջոցներ

3) բժշկական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Պատասխանատու Հաստատություն	Պատասխանատու անձ	Իրականացման ժամկետ	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ծախսեր	Ոչ ֆինանսական միջոցներ

4) կրթադաստիարակչական գործընթաց (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կազմակերպվում է անհատական ուսումնական պլանի համաձայն)

Վերականգնողական միջոցառումը և ծառայությունների տեսակները	Պատասխանատու Հաստատություն	Պատասխանատու անձ	Իրականացման ժամկետ	Ակնկալվող արդյունքը	Ֆինանսական ծախսեր	Ոչ ֆինանսական միջոցներ

Բազմաշահագրգիռ սոցիալական ծրագրի ընդհանուր բյուջեն

1. Ֆինանսական ծախսեր,
2. Ոչ ֆինասական ծախսեր,
3. Հաստատված ծախսեր / միջոցները առկա են /

4. Չհաստատված ծախսեր / Միջոցները բացակայում են /

Բազմաշահագրգիռ աշխատանքային խմբի անդամներ / Անուն Ազգանուն, ստորագրություն

1.
2.
3.
4.
5.
6.
7.
8.
9.
10.

Ծրագիրը լրացնողի պաշտոնը, անունը, ազգանունը

Ստորագրությունը
Լրացնելու ամսաթիվը

ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՕՐԱԳԻՐ

Հ/Հ Ը/Կ	Ամիս, ամսաթիվ	Կատարված աշխատանքները
1.		
2.		

3.		
4.		
5.		
6		
7		
8		
9		
10		

6. **Մասնագիտական կարողությունների զարգացում դեպքի վարման գործընթացում ներգրավված մասնագետների համար:**
   - Կարողությունների զարգացման կարիքի բացահայտում և վերապատրաստումներ

Իրականացնել պարբերաբար վերապատրաստումներ համապատասխան կարիքի հիման վրա: Սոցիալական

ծառայություն իրականացնող կառույցներում համապատասխան ձևաչափի միջոցով իրականացնել հարցազրույց աշխատակիցների հետ, որի արդյունքում վեր հանել վերապատրաստման կարիքները: Համապատասխան բացահայտված կարիքների մշակել տարեկան վերապատրաստումների պլան և իրականացնել այն: Վերապատրաստումները անհրաժեշտ է իրականացնել բոլոր շահագրգիռ կառույցների մասնակցությամբ, որոնք ներգրավված են համայնքում սոցիալական աջակցություն, մասնավորապես դեպքի վարման գործընթաց իրականացնելու գործում:

- Հաջողված փորձի տարածում

Ուսումնասիրել ՀՀ-ում ՍԱՏԳ-ների, սոցիալական ծառայություններ իրականացնող այլ կառույցների հաջողված փորձը և իրականացնել փորձի փոխանակման միջոցառումներ, համատեղ այցելություններ: Լուսաբանել լավագույն փորձը ԶԼՄ-ներով:

- Մեթոդական ձեռնարկների, ուղեցույցերի մշակում

Մեթոդական գրականության մշակում և հրատարակում դեպքի վարման գործընթացում ներգրավված մասնագետների, պատասխանատուների համար՝ ներառելով հաջողված փորձը, վիճակագրական տվյալներ, օրենսդրական կարևոր տեղեկություններ: Արդյունավետ կլինի հրատարակել տարեկան պարբերականներ, որտեղ կներկայացվեն ոլորտին առնչվող

կարևոր նորությունները և գործնական արդյունավետ մեթոդները:

7. **ՍԱՏԳ աշխատակիցների աշխատանքային պարտականությունների հստակեցում, նրանց աշխատանքային ծանրաբեռնվածության վերանայում կապված դեպքի վարման գործընթացը արդյունավետ իրականացնելու հետ:**

Ապահովել աշխատանքի այնպիսի պլանավորում և պայմաններ, որ աշխատակիցները լիովին ընդգրկվեն դեպքի վարման գործընթացում, այս գործում հստակեցնել պատասխանատուներին: Այս խնդիրը կարևոր է, քանի որ ՍԱՏԳ աշխատակիցները իրականացնում են դեպքի վարումից բացի այլ գործառույթներ, ինչը ազդում է դեպքի վարման գործընթացի իրականացման արդյունավետության վրա:

8. **Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների կարիքների ուղղությամբ դեպքերի վարումը պատվիրակել ՀԿ-ներին**, եթե տվյալ համայնքում գործում է համապատասխան ՀԿ/հիմնադրամ, որը կստանա համապատասխան հավաստագրում:
   Ապահովել այս ուղղությամբ բաց թափանցիկ մրցույթների իրականացումը:
9. **Պարբերաբար տրամադրել ՔՀԿ-ներին դրամաշնորհներ:**

Դրամաշնորհների տրամադրումը սոցիալական ոլորտում իրականացնել՝ օգտագործելով տեղական, մարզային ՀԿ-ների ներուժը, մրցույթների միջոցով վեր հանել նորարարական գաղափարներ, ծրագրեր և բարձրացնել ոլորտում սոցիալական ծառայությունների որակը:

II. Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) մասնակցության ընդլայնում սոցիլական դեպքի վարման գործընթացներում

1. Ընտանիքի, անձի կարիքների նախնական գնահատման գործընթացը վերապահել համայնքային սոցիալական աշխատողին:

Համայնքային սոցիալական աշխատողը կարիքների գնահատման արդյունքները փոխանցում է ՍԱՏԳ սոցիալական դեպք վարողին, ներկայացված տվյալների հիման վրա ՍԱՏԳ-ն որոշում է իրականացնել դեպքի վարումը թե ոչ:

Զարգացնել ՍԱՏԳ-ՏԻՄ համագործակցությունը, կարգավորել աշխատանքների համակարգումը և փոխօգնությունը: Այս կառույցների համագործակցությունը կարևոր է շահառուների թիրախ խմբերի բացահայտման գործում, շահառուների թիրախ խմբերի վերաբերյալ տվյալների համատեղ ճշտումը և տվյալների փոխանակումը ապահովել գործուն մեխանիզմների միջոցով, ներդնել էլեկտրոնային համակարգեր: Ստեղծել էլեկտրոնային համակարգ ՏԻՄ-ի և ՍԱՏԳ-ի կապը, տվյալների փոխանակումը ապահովելու համար:

2. **Առաջարկել ՏԻՄ-երին մշակել սոցիալական աջակցության հանրային քաղաքականություն համապատասխան ՍԱՏԳ-ների հետ համատեղ հավաքագրված տվյալների, վիճակագրական վերլուծությունների, բացահայտված կարիքների:**

Համայնքի սոցիալական աջակցության հանրային քաղաքականության հիման վրա մշակել և իրականացնել տարեկան գործողությունների պլան՝ սոցիալական տարեկան ծրագիր, որը կարող է պատրաստվել տարեկան բյուջեի մշակման ընթացքում՝ հաշվի առնելով համայնքի բյուջեի հնարավորությունները: Սոցիալական քաղաքականությունը պետք է ներառի նպատակներ, խնդիրներ և ռազմավարական մոտեցումներ: Սոցիալական աջակցության հանրային քաղաքականության միջոցով պլանավորվում է սոցիալական խնդիրները մեղմելու, համայնքի սոցիալական առաջնահերթ հիմնախնդիրների լուծման ռազամավարությունը և տարեկան գործողությունները, ծրագրերը:

3. **Զարգացնել համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտը, բացառել ոչ մասնագետների ներգրավումը:**

Խթանել համայնքային սոցիալական աշխատողների մասնակցությունը վերապատրաստումներին և կարողությունների զարգացման այլ միջոցառումներին ու գործողություններին:

III. Բիզնես ոլորտի ներկայացուցիչների ներգրավում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների խնդիրների լուծման գործընթացում

1. Իրականացնել ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոխություններ ապահովելու ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների և անհատների համար հնարավորություն՝ ՀՀ-ում գործող հարկատեսակների համար վճարվող հարկերի որոշակի մասը փոխանցելու սոցիալական ծառայություններ մատուցող պետական կամ ոչ պետական կառույցներին։
2. Փոփոխություններ Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքում, հոդված 23.2-ում ավելացնել, որ սոցիալական աջակցության խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև ձեռնարկատիրական կազմակերպությունների, ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներ։

IV. Համակարգող խորհրդի աշխատանքների արդյունավետության բարձրացում

1. Համակարգող խորհրդին ապահովել ֆինանսական միջոցներով դեպքի վարման հետ կապված խնդիրների լուծման համար։
2. Ստեղծել սոցիալական աջակցության, խնդիրների լուծման ֆոնդ/հիմնադրամ, որը կլինի վստահելի հանրության, մասնավոր հատվածի, դոնորների համար։ Իրականացնել դրամահավաք կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների խնդիրների լուծման ուղղությամբ։

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կընտրվի ՔՀԿ, պետական և մասնավոր հատվածից: Հիմնադրամը թափանցիկ մեթոդներով կիրականացնի հատկացումներ առաջնահերթ խնդիրների լուծման ուղղությամբ:

3. Համակարգող խորհրդի աշխատանքներին շահագրգիռ կողմերի լայն շրջանակների ներգրավում՝ ներառելով մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:
4. Շահառուների մասնակցության ապահովում Համակարգող խորհրդի աշխատանքներում՝ իրենց խնդիրների քննարկման, որոշումների կայացման պրոցեսին:

V. Ընտանեկան նպաստի համակարգի բարեփոխում

1. Ընտանեկան նպաստի առկա համակարգը աստիճանաբար փոփոխել և պասիվ աջակցության տրմադրումից անցնել խրախուսող և զարգացում ապահովող համակարգի:

2. Ներդնել կարիքավոր ընտանիքների եկամուտների ապահովման մեխանիզմներ: Օրինակ՝ եկամուտների աճի համապատասխան բոնուսային համակարգով ֆինանսական խրախուսման հատկացումներ:

3. Ընտանիքներին երեխայի գումարի հատկացում նպաստի փոխարեն: Դրամական միջոցները տրամադրել ընտանիքի երեխաներին մինչև 18 տարեկանը՝ սահմանելով համապատասխան չափանիշներ:

Հավելված

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին
ՀՕ-231-Ն

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով սահմանվում են սոցիալական ծառայությունների, սոցիալական աջակցության և ինտեգրված սոցիալական ծառայությունների հասկացությունները, հիմնական սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական ծառայությունների տրամադրման և սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները, սոցիալական աջակցության իրավունքը, նպատակը, սոցիալական աջակցության կառավարման համակարգը, սոցիալական աջակցություն ստացող անձանց իրավունքները և պարտականությունները, սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները, կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում սոցիալական համագործակցության, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման և սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **կյանքի դժվարին իրավիճակ՝** հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, աղքատության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու հանգամանքներից որևէ մեկով կամ դրանց համակցմամբ, մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող.

2) **սոցիալական աջակցություն՝** ըստ սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի.

3) **հիմնական պահանջմունքներ՝** ֆիզիկական անձի կեցության համար անհրաժեշտ նվազագույն պայմանների (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, միջնակարգ կրթություն կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, բնակարանային կոմունալ ծառայություններ) ամբողջություն.

4) **տարեց՝** 65 տարին լրացած անձ.

5) **բռնություն՝** անձի ֆիզիկական և (կամ) հոգեկան և (կամ) սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված արարք կամ դրա սպառնալիք.

6) **ընտանիք՝** միևնույն բնակության վայրում փաստացի բնակվող անձանց ամուսնական, ազգակցական, խնամիական կապերի վրա հիմնված փոքր սոցիալական խումբ, որի անդամները վարում են ընդհանուր տնտեսություն, ունեն ընդհանուր բյուջե, ընդհանուր շահեր, կապված են փոխօգնության, բարոյական ու իրավական փոխադարձ պատասխանատվության հիմունքներով, ինչպես նաև միայնակ ապրող անձ.

7) **ընտանեկան բռնություն՝** ընտանիքի մեկ անդամի կողմից մյուսի նկատմամբ ֆիզիկական կամ սեռական կամ հոգեբանական բնույթի բռնի գործողությունների (բռնության) կիրառում կամ տնտեսական միջոցներից զրկում.

8) **նախնական նույնացում՝** ուղղակի և անուղղակի չափորոշիչների կիրառման միջոցով «ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձի հայտնաբերում.

9) **սոցիալական կարիք՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի)՝ իր սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների լուծման համար անհրաժեշտ հմտությունների և կարողությունների բացակայություն կամ ապագայում դրա առաջացման հավանականությունը կանխատեսելու համար հիմքերի առկայություն.

10) **սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ (այսուհետ՝ տարածքայինմարմին)՝** սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի և գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում, որոնք իրենց սպասարկման տարածքում բնակչությանը տրամադրում են օրենքով նախատեսված սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայություններ.

11) **սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ (այսուհետ նաև՝կազմակերպություն)՝** սույն օրենքով սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրման սկզբունքներին համապատասխան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությանը կամ նրանց՝ նման իրավիճակում հայտնվելու կանխարգելմանն ուղղված սոցիալական ծառայությունը դրա կարիքն ունեցողին մատուցող կազմակերպություն (անկախ կազմակերպական-իրավական ձևից, բացառությամբ տարածքային մարմինների).

12) **սոցիալական ծառայություններ՝** սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայություններ.

13) **ինտեգրված սոցիալական ծառայություններ՝** ըստ սույն օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի.

14) **համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն՝** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ տարածքային մարմինների գտնվելու վայր, որտեղ մեկ պատուհանի սկզբունքով տարածքային մարմնի սպասարկման տարածքի բնակչությանը տրամադրվում են սոցիալական ծառայություններ.

15) **աջակցող ցանց՝** պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխգործակցության,

համատեղ գործունեության համակարգ՝ ուղղված անձանց, անձանց որոշակի խմբերի և ընտանիքների իրավունքների պաշտպանությանն ու իրականացմանը, օրինական շահերի և ազատությունների ապահովմանը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրման միջոցով.

16) **սոցիալական դեպք՝** կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի) մոտ մեկ կամ միմյանց հետ փոխկապակցված տարբեր սոցիալական կարիքների ամբողջությամբ պայմանավորված օբյեկտիվ իրավիճակ.

17) **սոցիալական դեպքի վարում՝** համագործակցության և հասանելի ռեսուրսների որոնման միջոցով և անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման հիման վրա իրականացվող գործընթաց, որը ներառում է սոցիալական աջակցություն ստացողների կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ծրագրավորումը, դրանք ստանալու հարցում աջակցությունը՝ նպատակ ունենալով բավարարել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները.

18) **սոցիալական անհատական ծրագիր (այսուհետ՝ անհատական ծրագիր)՝** սոցիալական դեպքի վարման արդյունքներով կազմված ծրագիր, որում ներառվում են սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տեսակներն իրենց տրամադրման ժամկետով, ակնկալվող արդյունքով, ինչպես նաև սոցիալական դեպքի շարունակական հսկողության ժամանակացույցը.

19) **սոցիալական պատրոնաժ՝** հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում սոցիալական պատրոնի (օգնականի) կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների ամբողջություն.

20) **սոցիալական ծառայությունների տրամադրում՝** սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սոցիալական ծառայությունների կազմակերպում և (կամ) մատուցում, ինչպես նաև այդ ծառայությունների կազմակերպմանը և (կամ) մատուցմանն ուղղված ցանկացած գործունեություն.

21) **սոցիալական աշխատանք՝** սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մասնագիտական գործունեություն:

Հոդված 3. Սոցիալական աջակցության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Գ Լ ՈՒ Խ 2

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Հոդված 4. Սոցիալական ծառայությունների հասկացությունը

1. Սոցիալական ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են՝ ուղղված՝

1) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական կարիքների կամ դրանցից ցանկացածի բավարարմանը և (կամ)

2) անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) բնականոն կենսագործունեության ապահովմանը և (կամ)

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն:

Հոդված 5. Սոցիալական ծառայությունների դասակարգումը

1. Սոցիալական ծառայությունները դասակարգվում են ըստ՝

1) տրամադրման ձևի.

2) տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների.

3) սոցիալական ծառայություններ տրամադրողի.

4) բնույթի.

5) տրամադրման տևողության և դրանց շարունակականության.

6) ֆինանսավորման աղբյուրների:

2. Սոցիալական ծառայությունները, ըստ տրամադրման ձևի, դասակարգվում են՝

1) ուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք լինում են՝

ա. սոցիալական անհատական ծառայություններ, որոնք տրամադրվում են անձին՝ վերջինիս սոցիալական պաշտպանության ապահովման ուղղությամբ առաջացած անհատական կարիքները բավարարելու նպատակով,

բ. խմբային, որոնք տրամադրվում են ընդհանուր՝ միևնույն կարիքն ունեցող անձանց խմբին միաժամանակ, այդ կարիքները բավարարելու նպատակով.

2) անուղղակի տրամադրվող սոցիալական ծառայություններ, որոնք կրում են ընդհանրական բնույթ և տրամադրվում են միևնույն կարիքն ունեցող սոցիալական խմբին:

3. Սոցիալական ծառայությունները, ըստ տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների, դասակարգվում են՝

1) սոցիալ-վարչարարական ծառայություններ, որոնց տրամադրման պայմաններն ու կարգը, անհրաժեշտ փաստական հանգամանքները

(տեղեկությունների ցանկը և դրանք ձեռք բերելու մեխանիզմները) սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, և դրանց տրամադրման համար ընդունվում է վարչական ակտ.

2) ընդհանուր մասնագիտական ծառայություններ, որոնց տրամադրման համար պահանջվում է ընդհանուր մասնագիտական մեթոդների կիրառում, և որոնք միտված են սոցիալական աջակցություն ստացողի իրավունքների իրականացման ապահովմանը կամ պաշտպանությանը կամ ունեն կանխարգելիչ բնույթ.

3) հատուկ (նեղ մասնագիտական) սոցիալական ծառայություններ, որոնց տրամադրումը պահանջում է նեղ մասնագիտական մեթոդների կիրառում, ինչպես նաև հատուկ տեխնիկական և այլ պայմանների առկայություն:

4. Սոցիալական ծառայությունները, ըստ տրամադրողի (տրամադրող սուբյեկտի), դասակարգվում են՝

1) Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.

2) համայնքի կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից տրամադրվող սոցիալական ծառայություններ:

5. Սոցիալական ծառայությունները, ըստ բնույթի, դասակարգվում են՝

1) սոցիալ-տնտեսական, որն ուղղված է անձանց բավարար կենսագործունեության ապահովմանը, կենցաղային պատշաճ մակարդակի ձևավորմանը և կենսամակարդակի բարելավմանը, այդ թվում՝ ցանկացած տեսակի գույքային օգնության տրամադրմամբ.

2) սոցիալ-հոգեբանական, որն ուղղված է անձանց հոգեբանական օգնության տրամադրմանը, սոցիալական ներառման նպատակով հոգեբանական վերականգնմանը.

3) սոցիալ-մանկավարժական, որն ուղղված է անձանց վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ժամանցի և հանգստի կազմակերպմանը, ստեղծագործական

ընդունակությունների զարգացմանը, երեխաների դաստիարակության հարցում ընտանիքին օգնության տրամադրմանը.

4) սոցիալ-բժշկական, որն ուղղված է խնամքի տրամադրման միջոցով անձանց խեղումների, հիվանդությունների զարգացման և ծանրացման կանխմանը, առողջության վերականգնմանը և պահպանմանը, առողջարարական ու վերականգնողական միջոցառումների իրականացմանը և դրանց օժանդակությանը, հիվանդությունների բացահայտման նպատակով մշտական հսկողության իրականացմանը.

5) սոցիալ-աշխատանքային, որն ուղղված է անձանց ինքնազբաղվածության ապահովմանը, հարմար աշխատանքի տեղավորմանը և աշխատանքային հարմարեցման հետ կապված այլ խնդիրների լուծմանը.

6) սոցիալ-իրավական, որն ուղղված է անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով խորհրդատվության և իրավաբանական օգնության տրամադրման ապահովմանը:

6. Սոցիալական ծառայությունները, ըստ տրամադրման տևողության և դրանց շարունակականության, դասակարգվում են որպես՝

1) մշտական, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) մշտապես.

2) պարբերական, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) որոշակի պարբերականությամբ.

3) մեկանգամյա, երբ տվյալ սոցիալական ծառայությունը (ծառայությունները) անձին (անձանց որոշակի խմբին) տրամադրվում է (են) միայն մեկ անգամ:

7. Սոցիալական ծառայությունները, ըստ ֆինանսավորման աղբյուրների, դասակարգվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.

2) համայնքների բյուջեների միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.

3) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ.

4) սույն մասով նախատեսված մեկից ավելի կետերով սահմանված ֆինանսական միջոցներից ֆինանսավորվող սոցիալական ծառայություններ:

8. Սոցիալ-վարչարարական ծառայությունների տրամադրման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 6. Սոցիալական ծառայությունների տրամադրումը

1. Հայաստանի Հանրապետությունը և համայնքը սոցիալական ծառայություններ են տրամադրում տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների միջոցով: Հայաստանի Հանրապետությունը և համայնքը օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով և համայնքների իրավական ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով կարող են սոցիալական ծառայություններ տրամադրել նաև այլ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում տարածքային մարմնում աշխատելու (քաղաքացիական ծառայության կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու) համար սահմանվում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերով աշխատելու կարողությունների պահանջ:

2. Հայաստանի Հանրապետությունը և համայնքը սոցիալական ծառայություններ են տրամադրում (այդ թվում՝ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց միջոցով) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում և կարգով:

3. Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք սոցիալական ծառայությունները տրամադրում են սույն օրենքով սահմանված՝ սոցիալական ծառայությունների տրամադրման նպատակներին և հիմնական

սկզբունքներին համապատասխան: Կազմակերպությունները կամ ֆիզիկական անձինք որոշակի սոցիալական ծառայություններ կարող են տրամադրել միայն տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը լիազորված մարմնում հավաստագրելու դեպքում: Սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սոցիալական ծառայությունների տրամադրումը՝

1) չի կարող ուղեկցվել քաղաքական կամ կրոնական քարոզչությամբ.

2) չի կարող հետապնդել տրամադրված սոցիալական ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք.

3) չի կարող վնաս պատճառել սոցիալական աջակցություն ստացողի առողջությանը, կյանքին և գույքին:

5. Տարածքային մարմինները սոցիալական ծառայությունները տրամադրում են համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում (այսուհետ նաև՝ համալիր կենտրոն):

6. Տարածքային մարմինները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունները սոցիալական ծառայություններ են տրամադրում՝

1) սոցիալական ծառայությունների տրամադրում հայցող անձի կամ նրա ներկայացուցչի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և այլ ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա.

3) սեփական նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

7. Տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների համար սույն հոդվածի 6-րդ մասի 1-ին կետում նշված

անձը դիմումը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ իր բնակության վայրի տարածքը սպասարկող տարածքային մարմին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

8. Սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված գործողությունները կամ անգործությունը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Սոցիալական ծառայությունների տրամադրման հիմնական սկզբունքները

1. Սոցիալական ծառայությունների տրամադրման հիմնական սկզբունքներն են՝

1) մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, մարդու արժանապատվությունը հարգելը.

2) հասցեականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը իսկապես դրա կարիքն ունեցող անձին.

3) մատչելիությունը՝ տրամադրվող սոցիալական ծառայություններին հասանելիության ապահովումը.

4) համաչափությունը՝ հետապնդված նպատակներին համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրումը.

5) խորհրդապահությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ժամանակ հայտնի դարձած անհատական տվյալները չհրապարակելը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերի.

6) օրինականությունը՝ սոցիալական ծառայությունների տրամադրումը Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

Հոդված 8. Հիմնական սոցիալական ծառայությունները

1. Հիմնական սոցիալական ծառայություններն են՝

1) խորհրդատվական օգնությունը.

2) վերականգնողական օգնությունը.

3) բնաիրային օգնությունը .

4) կացարանով ապահովելը.

5) խնամքը.

6) իրավական օգնությունը.

7) օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը.

8) օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները.

9) օրենքով չարգելված այլ սոցիալական ծառայություններ:

Հոդված 9. Խորհրդատվական օգնությունը

1. Խորհրդատվական օգնությունն անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ անձին տրվող խորհուրդներն ու առաջարկություններն են, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը:

Հոդված 10. Վերականգնողական օգնությունը և դրա տրամադրումը

1. Վերականգնողական օգնությունը սույն հոդվածի 2-րդ մասում նշված մեկ կամ մի քանի նպատակների իրականացմանն ուղղված սոցիալական ծառայությունն է:

2. Վերականգնողական օգնությունն ուղղված է՝

1) հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական, մտավոր և այլ խանգարումների բուժմանը, հաշմանդամության հանգեցրած խեղումների և

հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելուն, հաշմանդամություն ունեցող անձի օրգանիզմի խանգարված կամ կորսված ֆունկցիաների և առողջության վերականգնմանը.

2) անձանց կորցրած կամ նվազած մասնագիտական ունակությունների լրիվ կամ մասնակի վերականգնման, մասնագիտական հմտություններն օգտագործելու կամ նոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կարողությունների զարգացման, նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար մատչելի պայմանների ստեղծման նպատակով անձի մասնագիտական կողմնորոշմանը, մասնագիտական կրթությանը, մասնագիտական ուսուցմանը (որակավորման բարձրացմանը, վերամասնագիտացմանը, նախնական մասնագիտական պատրաստմանը, արհեստագործական ուսուցմանը), մասնագիտական հարմարվողականությանը, հարմար աշխատանքի տեղավորմանը և ինքնազբաղվածության ապահովմանը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում այլ անձանց հետ հավասար հնարավորությունների ստեղծմանը, նրանց սոցիալական հմտությունների վերականգնմանը և սոցիալական ներառմանը նպաստելուն:

3. Վերականգնողական օգնությունը տրամադրվում է՝

1) վերականգնողական բժշկական օգնության և սպասարկման ձևով.

2) վերականգնողական, տեխնիկական միջոցների և այլ օժանդակ սարքերի տրամադրման միջոցով.

3) սոցիալ-հոգեբանական վերականգնման ձևով.

4) մասնագիտական վերականգնման միջոցով.

5) աշխատանքային թերապիայի միջոցով.

6) օրենքով չարգելված այլ ձևերով:

4. Վերականգնողական օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Բնաիրային օգնությունը և դրա տրամադրումը

1. Բնաիրային օգնությունն անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու (կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու և (կամ) հաղթահարելու) նպատակով անձին (ընտանիքին, այլ սոցիալական խմբին) տրվող օգնությունն է:

2. Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, հատուկ տրանսպորտային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:

3. Բնաիրային օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 12. Կացարանով ապահովելը

1. Կացարանով ապահովելը սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց (ընտանիքներին) բնակելի տարածքի ժամանակավոր հատկացումն է:

2. Կացարանը տրամադրվում է՝

1) ժամանակավոր կացարանում, հասարակական նշանակության այլ օբյեկտներում բնակվող՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող բնակելի տարածություն չունեցող անձին (ընտանիքին)՝ պայմանագրային հիմունքներով մինչև 10 տարի ժամկետով՝ անհատույց, իսկ դրանից հետո վարձակալական հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը (ընտանիքը) օտարել է բնակարան (բնակելի տուն)՝ կացարանով ապահովելու համար հաշվառման վերցնելու ժամկետին նախորդող 5 տարիների ընթացքում.

2) որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան, մինչև 90 օր տևողությամբ.

3) ընտանեկան բռնության ենթարկված անձանց՝ որպես ժամանակավոր օթևան՝ մինչև 12 ամիս ժամկետով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերում տրամադրվում են՝

1) բնաիրային օգնություն՝ սննդի, հիգիենայի միջոցների, հագուստի, կոշիկի ձևով.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) խորհրդատվական օգնություն.

5) այլ համարժեք սոցիալական ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության կազմակերպվում են մասնագիտական կազմակերպություններում (հանրակրթական, մասնագիտացված բժշկական հաստատություն և այլն):

4. Կացարանով ապահովելու կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 13. Խնամքը և դրա տրամադրումը

1. Խնամքը տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաներին, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող անձին և նրա ընտանիքին՝ ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու կամ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող կամ հիվանդ անձանց իրենց հարազատ սոցիալական միջավայրում հնարավորինս երկար պահելու կամ հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է:

2. Խնամքը տրամադրվում է սննդի, այդ թվում՝ դիետիկ, բժշկական, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրթական, ժամանցի, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական շարունակական հսկողության և հիվանդանոցային բուժման, իրավական օգնության և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

3. Հիվանդության (ոչ բարենպաստ ելքի կանխատեսումով) վերջին շրջանում գտնվող անձին կյանքի վերջին ամիսների, օրերի ընթացքում, իսկ

անհրաժեշտության դեպքում նաև նրա ընտանիքի անդամներին տրամադրվում է պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն, որը՝

1) պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող հիվանդի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմելու հիվանդի ցավը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրներ՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով.

2) ընդգրկում է հետևյալ հիմնական կողմերը.

ա. հիվանդության ախտանիշների կառավարում,

բ. հոգեբանական, հոգևոր և հուզական աջակցություն,

գ. աջակցություն ընտանիքին,

դ. կորստի շրջանի աջակցություն.

3) տրամադրվում է հոսպիսում կամ տնային պայմաններում:

4. Խնամքը տրամադրվում է՝

1) տնային պայմաններում.

2) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում.

3) սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում.

4) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում.

5) հոսպիսներում (հիվանդությունների զարգացման վերջին փուլում գտնվող անձանց պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն ցուցաբերող կազմակերպություն).

6) սույն մասի 1-5-րդ կետերում չնշված՝ սոցիալական սպասարկում իրականացնող այլ կազմակերպություններում, կենտրոններում, հիմնարկներում, խնամատար ընտանիքներում:

5. Տնային պայմաններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող տարեց, չաշխատող (բացառությամբ տնային պայմաններում աշխատող) անձանց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց սոցիալական

անհատական ծրագրի համաձայն՝ հիմնականում սոցիալական ծառայությունների հետևյալ ձևերով.

1) կենցաղային սպասարկում.

2) բժշկական օգնություն և սպասարկում.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն.

4) խորհրդատվական օգնություն:

6. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք անչափահաս կամ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին: Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները լինում են՝

1) ընդհանուր տիպի՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար.

2) հատուկ (մասնագիտացված)՝

ա. 18 տարին լրացած քրոնիկ հոգեկան հիվանդությամբ կամ խոր մտավոր հետամնացությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ծերունական փսիխոզով կամ ծանր արտահայտված սկլերոզով անձանց համար,

բ. առանց ծնողական խնամքի մնացած ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաների համար.

3) խնամքի գիշերօթիկ հաստատություն՝ մինչև 18 տարեկան երեխաների համար.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ բնակչության սոցիալական պաշտպանության այլ տիպերի:

7. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները բնակիչներին տրամադրում են՝

1) անհրաժեշտ կահույք.

2) հագուստ, սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան.

3) անկողնային պարագաներ.

4) անձնական հիգիենայի պարագաներ:

8. Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունները կազմակերպում են բնակիչների՝

1) սննդի տրամադրումը.

2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը.

4) իրավական խորհրդատվության տրամադրումը.

5) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումը.

6) բժշկասոցիալական փորձաքննությունը.

7) հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը.

8) ազատ ժամանցը.

9) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայությունները.

10) աշխատանքային թերապիան:

9. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը խնամքը տրամադրում է կենտրոնում ցերեկային ժամերին՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև երեխաներին, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև այդ երեխաների ընտանիքների անդամներին՝ հիմնականում հետևյալ սոցիալական ծառայությունների ձևով.

1) սնունդ՝ օրական մեկ անգամ.

2) սոցիալ-հոգեբանական օգնություն.

3) իրավական խորհրդատվություն.

4) կրթաուսումնական կամ ուսումնադաստիարակչական ծառայություններ.

5) հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային վերականգնման անհատական ծրագրի կազմում, դրանով նախատեսված միջոցառումների իրականացում.

6) մասնագիտական կողմնորոշում.

7) արվեստի միջոցով թերապիա.

8) օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա):

10. Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը կազմակերպում է խնամք ստացողների՝

1) աշխատանքային թերապիան.

2) առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) ժամանցը, ինչպես նաև մշակութային միջոցառումներ.

4) սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումներ:

11. Հաշմանդամություն ունեցող չափահաս և գործունակ անձի հասարակական կյանքում լիարժեք գործունեության ապահովման, այդ թվում՝ աշխատանքի իրավունքի իրականացման համար, առանձնահատուկ պահանջների առկայության դեպքում կարող է տրամադրվել սոցիալական պատրոնաժ:

12. Խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 14. Իրավական օգնությունը

1. Իրավական օգնությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպության կողմից և իրավասությունների շրջանակում օրենքով սահմանված իրավաբանական օգնության կազմակերպումն է:

Հոդված 15. Օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելն ու վճարելը

1. Կենսաթոշակները, նպաստները և այլ դրամական վճարները նշանակելու և վճարելու պայմաններն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 16. Օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները

1. Զբաղվածության ծառայությունների, ինչպես նաև բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների տրամադրման պայմաններն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

Հոդված 17. Տարածքային մարմինների լիազորությունները

1. Տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով՝

1) գնահատում է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը (սահմանում տրամադրման ենթակա ծառայությունների համալիրը), ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը.

2) կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը.

3) անհատական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը.

4) տալիս է եզրակացություն՝

ա. խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի որդեգրման, խնամակալության կամ հոգաբարձության, խնամատարության կամ բնակչության սոցիալական

պաշտպանության հաստատություն ուղեգրելու, ինչպես նաև խնամակալ ճանաչելու կամ խնամատար ծնող կամ որդեգրել ցանկացող անձ հաշվառելու մասին,

բ. նախնական նույնացման մասին՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությանը.

5) մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին.

6) աջակցում է դիմողին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը.

7) աջակցում է երեխայի կրթության (այդ թվում՝ նախադպրոցական կրթության) իրավունքի իրականացմանը.

8) աջակցում է երեխաների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերի լուծմանը.

9) ապահովում է սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն սոցիալական աջակցություն ստացողների անհատական կարիքներին.

10) հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ՝ նրա դիմելու դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ.

11) համագործակցում է աջակցող ցանցի հետ.

12) տարածքային մակարդակով կազմակերպում է սոցիալական համագործակցության համաձայնագրի ընդունման գործընթացը.

13) ընդունում է անձանց դիմումները՝ մեկ պատուհանի սկզբունքով, ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստաթղթաշրջանառությունը.

14) կատարում է անձանց ընդունելություն՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն.

15) սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ տվյալները ստանում է առցանց կամ անհրաժեշտ փաստաթղթերով և կիրառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

16) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով նշանակում է կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ, ապահովում է դրանց վճարումը.

17) Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրում է զբաղվածության ծառայություններ.

18) Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով մատուցում է ծառայություններ բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում .

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Տարածքային մարմնի կողմից սոցիալական ծառայություններ տրամադրվելու պայմաններն ու կարգը (տարածքային մարմնի լիազորությունների իրականացման կարգը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 3

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 18. Սոցիալական աջակցությունը և դրա իրավունքը

1. Սոցիալական աջակցությունը կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու կամ հաղթահարելու նպատակով անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունների տրամադրումն է Հայաստանի Հանրապետության և (կամ) համայնքի կողմից:

2. Սոցիալական աջակցության իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվող յուրաքանչյուր ոք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

Հոդված 19. Սոցիալական աջակցության նպատակները

1. Սոցիալական աջակցության հիմնական նպատակներն են՝

1) բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները.

2) խթանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը.

3) ստեղծել պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի ներառումը հասարակություն ապահովելու համար, օժանդակել նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը.

4) կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակը:

Հոդված 20. Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքները

1. Սոցիալական աջակցության հիմնական սկզբունքներն են՝

1) երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը.

2) համագործակցությունը՝ սոցիալական աջակցության տրամադրումը աջակցող ցանցի մասնակիցների փոխգործակցության և համատեղ գործունեության հիման վրա.

3) համարժեքությունը և շարունակականության ապահովումը՝ սոցիալական կարիքներին առավել համապատասխան սոցիալական աջակցության տրամադրումը, դրանց շարունակականության ապահովումը.

4) թափանցիկությունը՝ սոցիալական աջակցության վերաբերյալ տեղեկատվության հասանելի լինելը հասարակության համար.

5) սոցիալական խնամառության բացառումը՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացումը սոցիալական աջակցությունից շարունակական կախվածությունը բացառելու համար.

6) նախաձեռնողականությունը՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն նպաստող գործոնների վերհանումը, այդ գործոնների կանխմանն ու հակազդմանն ուղղված միջոցառումների իրականացումը.

7) խտրականության արգելքը՝ սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորությունների ապահովումը, սոցիալական աջակցության տրամադրման ընթացքում խտրական վերաբերմունքի բացառումը.

8) մասնակցությունն ապահովելը՝ անձի՝ իր սոցիալական խնդիրների լուծման որոշումների կայացմանը մասնակից դարձնելը.

9) կամայականության արգելքը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ անհավասար մոտեցում ցուցաբերելու անթույլատրելիությունը, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

ԳԼՈՒԽ 4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 21. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) սահմանում է սոցիալական աջակցության քաղաքականության հիմնական ուղղությունները.

2) իրականացնում է միասնական պետական քաղաքականությունը.

3) սահմանում է պետական ծախսերի ծրագիրը.

4) հաստատում է սոցիալական ծառայությունների տրամադրման կարգերը.

5) ըստ մարզերի և (կամ) տարածաշրջանների քննարկում է առանձին սոցիալական խմբերի ընդհանրական սոցիալական կարիքները և իրականացնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառների վերացմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի, միջոցառումների ընթացիկ և վերջնական թիրախավորում՝ ըստ սոցիալական աջակցության ծրագրերի, միջոցառումների, մարզերի և (կամ) առանձին տարածաշրջանների ու սոցիալական խմբերի և համապատասխան ծրագրերն ընդգրկում հաջորդ տարվա պետական բյուջեում:

Հոդված 22. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի լիազորությունները

1. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորած պետական մարմին)՝

1) իր իրավասությունների շրջանակներում մշակում և իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառում պետական քաղաքականությունը.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնում է առաջարկություններ՝ սոցիալական աջակցության

զարգացման ուղղությունների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին.

3) հաստատում է լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինների օրինակելի կանոնադրությունը և իրականացնում է այդ տարածքային մարմինների գործունեության մեթոդական ղեկավարումը.

4) ապահովում է համալիր կենտրոններում մեկ պատուհանի սկզբունքով դիմումների ընդունումը, հաշվառումը և միասնական փաստաթղթաշրջանառությունը.

5) հաստատում է սոցիալական աշխատանքի մասնագետների պաշտոնների օրինակելի բնութագրերը, տվյալ պաշտոնը զբաղեցնողի պաշտոնեական պարտականությունները, գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ներկայացվող ընդհանրական պահանջները, որակավորման պահանջները.

6) կազմակերպում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ.

7) հաստատում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտացման, ինչպես նաև սոցիալական աշխատանքի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացների արդյունքում տրվող վկայականների օրինակելի ձևերը.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության պետական կրթական չափորոշչի ձևավորմանը.

9) կազմակերպում է սոցիալական պաշտպանության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման դասընթացներ, ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դեպքում հավաստագրում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեությունը.

10) սահմանում է տնային այցելություն կատարելու, սոցիալական դեպքի վարման, տեղական սոցիալական ծրագրերի մշակման մեթոդական

ցուցումները, սույն օրենքի 35-րդ հոդվածով սահմանված սոցիալական համագործակցության համաձայնագրի օրինակելի ձևը և դրա ընդունման ընթացակարգը.

11) լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններում իրականացնում է պետական վերահսկողություն սոցիալական աջակցության բնագավառին վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ստուգում է այլ մարմիններից և կազմակերպություններից (անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից) տրված՝ սոցիալական աջակցության տրամադրման համար պահանջվող փաստաթղթ(եր)ի հավաստիությունը.

13) լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններից պահանջում է տեղեկատվություն՝ տրամադրվող սոցիալական ծառայությունը սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, իսկ դրա անհամապատասխանության դեպքում՝

ա. պահանջ է ներկայացնում լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններ՝ սահմանված ժամկետում վերացնելու հայտնաբերված անհամապատասխանությունը,

բ. համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին ենթարկում է օրենքով սահմանված պատասխանատվության կամ դիմում է լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող համապատասխան տարածքային մարմնի վերադասին՝ համապատասխան սոցիալական աշխատանքի մասնագետին օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ.

14) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ նրա դիմելու դեպքում կամ իր նախաձեռնությամբ.

15) սահմանում է սոցիալական ծառայությունների որակի վերահսկման հետադարձ կապի մեխանիզմները.

16) ստեղծում և վարում է սոցիալական աջակցության բնագավառի տեղեկատվական շտեմարաններ, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ռեգիստր.

17) ուսումնասիրում է տարածքային մարմինների և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունների հետ կապված բողոքները, խախտումներ հայտնաբերելու դեպքում ձեռնարկում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված միջոցառումներ դրանք վերացնելու ուղղությամբ.

18) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմակերպում է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործընթացում կիրառվող համակարգչային ծրագրերի ուսուցման դասընթացներ և տրամադրում է այդ ծրագրերով աշխատելու կարողությունները հաստատող հավաստագրեր.

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 23. Տարածքային կառավարման պետական մարմնի լիազորությունները

1. Տարածքային կառավարման պետական մարմինն իր իրավասությունների շրջանակում՝

1) իրականացնում է մարզի սոցիալական աջակցության պետական ծրագրերը.

2) համակարգում և իրականացնում է մարզի սոցիալական աջակցության ծրագրերը.

3) աջակցում է սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններին մարզում սոցիալական աջակցության ծրագիր իրականացնելիս.

4) համակարգում է սույն օրենքի 37-րդ հոդվածով սահմանված տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

5) աջակցում է պետական կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների նշանակման ու վճարման կազմակերպման աշխատանքներին, օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունների և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունների տրամադրմանը:

Հոդված 24. Տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունները

1. Տեղական ինքնակառավարման մարմինը սոցիալական ծառայություններ է տրամադրում՝

1) պետության պատվիրակած լիազորությունների շրջանակներում.

2) սոցիալական աջակցության համայնքային ծրագրերի շրջանակներում.

3) կամավոր լիազորությունների շրջանակներում:

2. Համայնքի ղեկավարը համագործակցում է աջակցող ցանցի հետ:

3. Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին:

4. Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին:

5. Համայնքի ղեկավարը համալիր կենտրոններում տեղակայված տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:

ԳԼՈՒԽ 5

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 25. Սոցիալական աջակցության տրամադրման մասին որոշումը

1. Սոցիալական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասում նշված ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրավոր և բանավոր դիմումների, ներկայացրած տեղեկությունների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների նախաձեռնությամբ:

2. Սոցիալական աջակցություն հայցող անձը այն ստանալու համար անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դիմում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ իր բնակության վայրի տարածքը սպասարկող տարածքային մարմնին, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Սոցիալական աջակցություն ստանալու համար այն հայցող անձը կամ նրա ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում դիմումին կից ներկայացնում է Հայաստանի

Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ սոցիալական աջակցություն ստանալու (տվյալ սոցիալական ծառայության կամ ծառայությունների տրամադրման) համար անհրաժեշտ փաստաթղթերը, եթե դրանք (կամ դրանցում նշված տվյալները) ներառված չեն համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններում:

4. Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում սոցիալական աջակցության շրջանակներում մեկ կամ մի քանի սոցիալական ծառայությունները կարող են տրամադրվել բացառապես այն հայցող անձի կողմից գրավոր դիմումը և սոցիալական ծառայության (ծառայությունների) տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերն անձամբ ներկայացվելու դեպքում:

5. Սոցիալական աջակցություն տրամադրելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումն ընդունում է տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու իրավազորություն ունեցող տարածքային մարմինը կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող համապատասխան կազմակերպությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում ընդգրկված և կառավարման ոլորտում գործող տարածքային մարմինների կողմից սոցիալական աջակցություն տրամադրվելու կամ սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշման ընդունման կարգը, պայմանները և ժամկետը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց համապատասխան ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերով:

7. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին որոշումը կայացնում են դիմումը ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 30 օրացուցային օրվա ընթացքում, եթե այլ բան

սահմանված չէ սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

8. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում ընդունելու համար լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության կամ դիմումին կից ոչ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման դեպքում նույն օրը դիմողին գրավոր տեղեկացնում են լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության կամ պակասող փաստաթղթերի ցանկի և դրանք սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության մասին, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված չեն տեղեկացման այլ կարգ և ժամկետներ: Սույն մասով սահմանված դեպքում, եթե դիմողը տեղեկացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնում է անհրաժեշտ փաստաթղթերը, ապա դիմելու օր է համարվում դիմումի սկզբնական ներկայացման օրը, իսկ նշված ժամկետից ուշ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում դիմելու օր է համարվում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

9. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելու կամ այն մերժելու մասին գրավոր տեղեկացնում են դիմողին ոչ ուշ, քան այդ որոշման ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, եթե տեղեկացման այլ կարգ և ժամկետներ նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության օրենքներով:

10. Այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշումների ընդունման կարգը, պայմանները, ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով:

11. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող դեպքերում սոցիալական աջակցությունը տրամադրում են անհապաղ՝ այդ մասին տեղեկատվությունը ստանալուց հետո:

12. Տարածքային մարմնի ընդունած որոշումը, գործողությունը կամ անգործությունը կարող են բողոքարկվել վարչական և (կամ) դատական կարգով:

Հոդված 26. Սոցիալական աջակցության տրամադրման մերժումը

1. Սոցիալական աջակցության տրամադրումը մերժվում է՝

1) սոցիալական աջակցության (տվյալ սոցիալական ծառայության) տրամադրման համար օրենքով սահմանված բավարար հիմք(եր)ի բացակայության դեպքում.

2) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում դիմողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (տվյալները) չներկայացնելու դեպքում.

3) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի տեղեկություններ ներկայացվելու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

2. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինները սոցիալական աջակցություն տրամադրելը մերժելու մասին որոշման մեջ նշում են մերժման հիմք(եր)ը, բողոքարկման ժամկետը և մարմինը, որին կարող է այդ որոշումը բողոքարկվել, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ տեղեկություններ:

Հոդված 27. Սոցիալական աջակցության տրամադրումը դադարեցնելը

1. Սոցիալական աջակցության տրամադրումը դադարեցվում է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու հիմքերի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ սոցիալական աջակցություն ստացողի կողմից ներկայացված՝ սոցիալական աջակցությունը տրամադրելու որոշման համար հիմք հանդիսացած տեղեկությունները (փաստաթղթերը) հավաստի չեն.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ սոցիալական աջակցություն ստացողի կողմից սոցիալական աջակցություն ստանալու պայմաններն ու կարգը խախտելու դեպքում.

4) սոցիալական աջակցություն ստացողի՝ սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերի.

5) սոցիալական աջակցություն ստացողի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ դեպքերում:

2. Սոցիալական աջակցության տրամադրումը վերականգնվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով:

Հոդված 28. Սոցիալական աջակցություն հայցող և ստացող անձանց իրավունքները

1. Սոցիալական աջակցություն հայցող (սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած) անձն իրավունք ունի՝

1) ստանալու տեղեկատվություն իր սոցիալական իրավունքների, դրանց իրականացման պայմանների, կարգի և տվյալ սոցիալական խնդիրը լուծելու եղանակների մասին.

2) պահանջելու և ստանալու սոցիալական աջակցություն՝ օրենքով սահմանված բավարար հիմքերի առկայության դեպքում.

3) ստանալու իր կյանքի և առողջության համար անվտանգ սոցիալական ծառայություններ.

4) սոցիալական աջակցության տրամադրման մերժման դեպքում ստանալու գրավոր պատասխան կամ այդ մասին իրազեկվելու Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ եղանակներով .

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցելու սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ որոշման ընդունման գործընթացին.

6) հրաժարվելու սոցիալական աջակցություն ստանալուց, բացառությամբ սույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի.

7) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների որոշումները, գործողությունները կամ անգործությունը.

8) իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ իրավունքներ:

2. Սոցիալական աջակցություն ստացող անձն, ի լրումն սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված իրավունքների, իրավունք ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցելու սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում իր սոցիալական խնդիրների լուծմանը վերաբերող առանձին որոշումների կայացման գործընթացին:

Հոդված 29. Սոցիալական աջակցություն ստացողի պարտականությունները

1. Սոցիալական աջակցություն ստացողը պարտավոր է՝

1) մասնակցել իր սոցիալական խնդիրների լուծմանը.

2) ներկայացնել սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ և հավաստի տվյալներ.

3) լինել ակտիվ իր սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

4) չխոչընդոտել սոցիալական աշխատանքի մասնագետների կողմից իրականացվող տնային այցելություններին.

5) սոցիալական աջակցությունն օգտագործել նպատակային:

2. Սոցիալական աջակցություն ստացող անձն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 30. Սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու և սոցիալական աջակցություն ստանալու անձի իրավունքի սահմանափակումները

1. Անձի (նրա օրինական ներկայացուցչի)՝ սոցիալական աջակցություն ստանալուց հրաժարվելու դեպքում անձը տեղավորվում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում, եթե չի ստանում անհրաժեշտ խնամք և

1) ինքնասպասարկման և (կամ) ակտիվ տեղաշարժվելու ունակության կորստով պայմանավորված՝ անկարող է ինքնուրույն բավարարել իր հիմնական պահանջմունքները) կամ

2) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերով, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության անձին բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություն տեղավորելու որոշումը կայացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի եզրակացության հիման վրա:

3. Սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված խնամքի տրամադրումն անձին կարող է մերժվել, եթե նա քրոնիկ ալկոհոլամոլ և (կամ) թմրամոլ է, վարակակիր է, տառապում է այնպիսի հիվանդություններով, որոնց բուժումը հնարավոր է միայն հատուկ մասնագիտացված բժշկական հաստատություններում: Հիվանդությունների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով սոցիալական աջակցության տրամադրումը մերժելու մասին որոշումը լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ընդունում է համապատասխան մասնագիտացված բժշկական հաստատության եզրակացության հիման վրա:

ԳԼՈՒԽ 6

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հոդված 31. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները

1. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները ստեղծվում են տվյալ սոցիալական ծառայության տրամադրման համար անհրաժեշտ տվյալներն առցանց ինքնաշխատ ստանալու եղանակով կամ դրա անհնարինության դեպքում՝ սոցիալական աջակցություն ստանալու համար դիմող անձի ներկայացրած փաստաթղթերում ներառված տվյալներով:

2. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարաններն ստեղծվում են՝

1) սոցիալական աջակցության չափերի, հեռանկարային զարգացման ուղղությունների, դրանց ֆինանսավորման հնարավոր միջոցների կանխատեսման նպատակով.

2) սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի համակարգման նպատակով:

3. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները տիրապետում է լիազորած պետական մարմինը, սպասարկում և շահագործում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած կազմակերպությունը:

4. Սոցիալական աջակցության տեղեկատվական շտեմարանները պարունակում են սոցիալական ծառայություններ ստանալու համար դիմած անձանց անհատական տվյալները, սոցիալական ծառայությունը ստանալու հիմքը կամ մերժելու պատճառը, տրամադրվող սոցիալական ծառայությունը, սոցիալական ծառայության ստացման ժամկետները, դրա պարբերականությունը, սոցիալական ծառայության ծավալը (չափը), տրամադրման և դադարեցման ժամկետները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

5. Տարածքային մարմինները և կազմակերպությունները պարտավոր են սոցիալական ծառայություններ տրամադրելու մասին տվյալները ներկայացնել լիազորած պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով, իսկ լիազորած պետական մարմնի ենթակայությամբ գործող կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրի հիման վրա սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները՝ համապատասխանաբար լիազորած պետական մարմնի սահմանած կամ լիազորած պետական մարմնի հետ կնքած պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

Հոդված 32. Սոցիալական աջակցության ֆինանսավորման աղբյուրները

1. Սոցիալական աջակցության ֆինանսավորումն իրականացվում է՝

1) պետական բյուջեի միջոցներից.

2) համայնքի բյուջեի միջոցներից.

3) իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից.

4) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում և կարգով:

Գ Լ ՈՒ Խ 7

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Հոդված 33. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը

1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, սոցիալական աջակցության շրջանակներում նրանց կողմից իրականացվող գործառույթների (լիազորությունների) և միջոցառումների ամբողջությունն է: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը համագործակցության ապահովման միջոցով կանխարգելում է անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, վերացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները:

2. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի հիմնական բաղադրիչներն են՝

1) լիազորած պետական մարմինը.

2) միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերը.

3) աջակցող ցանցը (սույն օրենքով սահմանված սոցիալական համագործակցության համաձայնագրի կողմերը).

4) համալիր կենտրոնը.

5) տարածքային մարմինները.

6) միասնական տեղեկատվական համակարգը:

3. Ինտեգրված սոցիալական ծառայություններն անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատման հիման վրա և սոցիալական աջակցության շրջանակներում իրականացվող՝ սույն

հոդվածի 4-րդ մասով սահմանված մեկ կամ մի քանի գործողությունների, ծրագրերի ու միջոցառումների ամբողջությունն է:

4. Ինտեգրված սոցիալական ծառայությունները ներառում են՝

1) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատումը և այդ կարիքները բավարարելու նպատակով հասանելի ռեսուրսների որոնումը.

2) անհատական ծրագիր կազմելը և դրա իրականացումն ապահովելը.

3) մեկ պատուհանի սկզբունքով սոցիալական կարիքներին համարժեք տարատեսակ սոցիալական ծառայությունները համակցված մատուցելը կամ դրանց համակցված մատուցումը կազմակերպելը.

4) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքները բավարարելու ուղղությամբ միջգերատեսչական համագործակցությունն ու սոցիալական համաձայնագրի շրջանակներում աջակցող ցանցի համագործակցությունը (այդ թվում՝ այդ համագործակցությունն ապահովելը).

5) տեղական սոցիալական ծրագրեր կազմելը և իրականացնելը.

6) անձի (ընտանիքի կամ այլ սոցիալական խմբի) սոցիալական կարիքների համալիր գնահատման հիման վրա սույն հոդվածի 1-ին մասում նշված նպատակներով իրականացվող այլ ծրագրերն ու միջոցառումները:

5. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումն ապահովում է լիազորած պետական մարմինը: Տարածքային մարմնի սպասարկման տարածքի բնակչությանն ինտեգրված սոցիալական ծառայությունները տրամադրում են տարածքային մարմինները:

6. Ինտեգրված սոցիալական ծառայությունները տրամադրվում են սոցիալական դեպքի վարման շրջանակներում: Ինտեգրված սոցիալական ծառայությունները կարող են տրամադրվել նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառների վերացմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի, միջոցառումների շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

7. Սոցիալական դեպքի վարման շրջանակներում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմակերպում է սոցիալական դեպք վարողը՝ անհատական ծրագիր կազմելու և անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման միջոցով:

Հոդված 34. Լիազորած պետական մարմնի, տարածքային կառավարման պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային մարմինների և կազմակերպությունների համագործակցությունը

1. Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ:

2. Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին:

3. Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում:

Հոդված 35. Սոցիալական համագործակցության համաձայնագիրը

1. Սոցիալական համագործակցության համաձայնագիրն (այսուհետ՝ համաձայնագիր) ընդունվում է ազգային և տարածքային մակարդակներում:

2. Համաձայնագրի ընդունումը ազգային մակարդակում կազմակերպում է լիազորած պետական մարմինը, իսկ տարածքային մակարդակում՝ լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինը:

3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում համագործակցությունն իրականացվում է աջակցող ցանցի միջոցով՝ տարածքային մակարդակում ընդունված համաձայնագրի հիման վրա: Աջակցող ցանցում ներառվում են տարածքային մարմինները, իսկ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև ֆիզիկական անձինք (այսուհետ՝ աջակցող ցանցի մասնակից) միանում են կամավոր հիմունքներով:

4. Համաձայնագիրը ներառում է համագործակցության նպատակներն ու սկզբունքները, կողմերի պարտավորությունները, համակարգող խորհրդի ձևավորման, ինչպես նաև պարտավորությունների կատարման հսկողության և դրանց չկատարման դեպքում՝ համապատասխան միջոցառումների իրականացման մեխանիզմները:

5. Համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական տրամադրման ապահովումը.

2) սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտումը, բացասական ազդեցության չեզոքացումը.

3) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությունը և նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը.

4) սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, դրանց որակի

բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով.

5) սոցիալական դեպքի վարման շրջանակներում փոխգործակցության ապահովումը, սոցիալական դեպքի վարման գործընթացի արդյունավետության մեծացումը.

6) ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումը.

7) արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծումը.

8) աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը.

9) սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացումը.

10) վստահության մթնոլորտի ձևավորումը:

6. Համագործակցության հիմնական սկզբունքներն են համակառավարումը, հավասար պատասխանատվությունը, թափանցիկության ապահովումը և ժողովրդավարությունը:

7. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական իրավունքներն են՝

1) ստանալ տեղեկատվություն աջակցող ցանցի մյուս մասնակիցներից՝ իրենց կողմից իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) ակնկալել անհապաղ աջակցություն աջակցող ցանցի մասնակիցներից իրենց հնարավորությունների շրջանակում, սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում.

3) առաջարկություններ ներկայացնել սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի բարելավման նպատակով:

8. Աջակցող ցանցի մասնակիցների հիմնական պարտականություններն են՝

1) իրազեկել աջակցող ցանցի մյուս մասնակիցներին իրականացվող ծրագրերի (տրամադրվող սոցիալական ծառայությունների) և առկա ռեսուրսների մասին.

2) արագ արձագանքել սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում՝ իրենց հնարավորությունների շրջանակներում.

3) մասնակցել համայնքների սոցիալական կարիքների վերհանման, ինչպես նաև դրանց համարժեք՝ տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին.

4) համագործակցել սոցիալական դեպքի վարման շրջանակներում.

5) առաջարկություններ ներկայացնել աջակցող ցանցի մասնակիցներին՝ սոցիալական անհատական ծառայությունների տրամադրման գործընթացի հայեցողական լիազորությունների շրջանակներում որոշումների կայացման համար:

9. Համաձայնագրում կարող են ներառվել սույն օրենքով սահմանված նպատակներին և սկզբունքներին չհակասող այլ նպատակներ, սկզբունքներ, իրավունքներ և պարտականություններ:

10. Համաձայնագրի օրինակելի ձևը հաստատում է լիազորած մարմինը:

Հոդված 36. Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունը

1. Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում՝ տարածքային մարմինների, առողջապահական, կրթաուսումնական կազմակերպությունների, ոստիկանության տեղամասային տեսուչների և այլ շահագրգիռ կողմերի (այսուհետ՝ կողմեր) միջև:

2. Միջգերատեսչական սոցիալական համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կանոնակարգով:

3. Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգով սահմանվում են՝

1) համագործակցող կողմերի ցանկը.

2) համագործակցող կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները.

3) միջգերատեսչական համագործակցության ձևերն ու կարգը.

4) խնդրահարույց այն դեպքերը, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, որոնց հայտնաբերման ժամանակ կողմերը պարտավորվում են տեղեկացնել համապատասխան տարածքային մարմնին.

5) համագործակցող կողմերի միջև տրամադրվող տեղեկատվության ծավալի, ձևի, տրամադրման ժամկետի մասին պահանջները.

6) մշտադիտարկման և գնահատման ընթացակարգը:

Հոդված 37. Տեղական սոցիալական ծրագրերը

1. Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են տարածքային առանձնահատկությունների, տարածքում առկա խնդիրների հաշվառմամբ՝ կարճաժամկետ և միջնաժամկետ կտրվածքով՝ համայնք(ներ)ի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա:

2. Տեղական սոցիալական ծրագրերը մշակվում են համայնքի ղեկավարի կողմից, լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական դեպք վարողի մասնագիտական աջակցությամբ՝ գործընթացին մասնակից դարձնելով համայնքի տարածքում գործող աջակցող ցանցի մասնակիցներին և համայնքի բնակչության ներկայացուցիչներին:

3. Տեղական սոցիալական ծրագրերը կարող են կազմվել մեկ համայնքի կամ մեկից ավելի համայնքների կողմից համատեղ՝ ընդհանուր խնդիրների լուծման և ընդհանրական սոցիալական կարիքների բավարարման նպատակով:

4. Տեղական սոցիալական ծրագրերն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի կամ պայմանագրային հիմունքներով՝ համայնքում գործող աջակցող ցանցի մասնակցի կողմից:

5. Տեղական սոցիալական ծրագրերը կարող են ֆինանսավորվել՝

1) համայնքի բյուջեի միջոցներից.

2) իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից.

3) սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցների հաշվին:

6. Տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվում է սույն օրենքով սահմանված սկզբունքների համաձայն, համայնքի ավագանու հաստատած կարգով՝ սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագրին համապատասխան:

Գ Լ ՈՒ Խ 8

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Հոդված 38. Սոցիալական աշխատանքը

1. Սոցիալական աշխատանքը մարդու սոցիալական անհատական կարիքների բավարարման նպատակով հոգեբանական և մանկավարժական մեթոդների ու եղանակների կիրառման միջոցով իրականացվող մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է մարդու (անձամբ այն իրականացնելու անկարողության դեպքում) կյանքի դժվարին իրավիճակը հաղթահարելուն կամ կանխարգելելուն՝ մարդուն, ընտանիքին, սոցիալական այլ խմբերին անհատական օգնություն ցուցաբերելու միջոցով՝ սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

2. Սոցիալական աշխատանքի մասնագետներն են սոցիալական աշխատողն ու սոցիալական սպասարկողը:

Հոդված 39. Սոցիալական աշխատանքի մասնագետը

1. Սոցիալական աշխատողը «Սոցիալական աշխատանքի» բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական աշխատողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

2. Սոցիալական աշխատող կարող է լինել նաև այլ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը, որն ունի սոցիալական ոլորտի աշխատանքի առնվազն մեկ տարվա փորձ:

3. Սոցիալական սպասարկողը «Սոցիալական աշխատանքի» միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և սոցիալական սպասարկողի մասնագիտական գործունեություն իրականացնող անձն է:

4. Սոցիալական սպասարկող կարող է լինել նաև այլ միջին կամ նախնական մասնագիտական կրթություն ունեցող և (կամ) «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացներ ավարտած, համապատասխան վկայական ստացած անձը:

Հոդված 40. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատանքի մասնագետները քաղաքացիական կամ համայնքային ծառայողներ են:

2. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմինն ունի սոցիալական աշխատող, որը սոցիալական դեպք վարողն է, և սոցիալական սպասարկող:

3. Սոցիալական դեպք վարողը և սոցիալական սպասարկողն իրավունք ունեն՝

1) կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները.

2) ներկայացնելու առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ:

4. Սոցիալական դեպք վարողը՝

1) տիրապետում է սոցիալական աջակցություն հայցողի, ինչպես նաև ստացողի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նրա սոցիալական կարիքների գնահատման, այդ կարիքների բավարարմանն ուղղված անհատական ծրագրերի կազմման մեթոդներին ու տեխնիկային, առկա ռեսուրսների և հնարավորությունների մասին տեղեկատվությանը.

2) համագործակցում է աջակցող ցանցի մասնակիցների հետ:

5. Սոցիալական դեպք վարողը պարտավոր է՝

1) պաշտպանել սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը.

2) ապահովել սոցիալական աջակցություն ստացողի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունն իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական հմտությունները և ինքնիրացումը (ինքնորոշումը).

3) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները.

4) կազմել սոցիալական աջակցություն ստացողի անհատական ծրագիրը՝ ներգրավելով աջակցող ցանցի մասնակիցների մասնագետներին.

5) օգտագործել տվյալ տարածաշրջանում առկա աջակցող ցանցը՝ սոցիալական անհատական ծրագիր կազմելու և իրականացնելու նպատակով.

6) համակարգել սոցիալական անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, կազմակերպել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներ և ուղղորդել սոցիալական աջակցություն ստացողին տարբեր մասնագիտացված կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև դրանք իրականացնելու համար.

7) ստանձնել միջնորդի դեր տարբեր և երբեմն միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ ապահովելով կազմակերպությունների միջև համագործակցությունը և տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի պաշտպանության առաջնային դերը.

8) կազմակերպությունների և համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հետ մշակել կանխարգելող ծրագրեր՝ ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների նվազեցմանը, սոցիալական իրավունքների կոլեկտիվ պաշտպանության մեխանիզմների ձևավորման խթանմանը և պաշտպանությանը.

9) ապահովել անձանց համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ.

10) պահանջել սոցիալական աջակցություն հայցող կամ սոցիալական աջակցություն ստացող անձից միայն սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ տեղեկությունները, աջակցել անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ճիշտ ներկայացմանը.

11) աջակցել իր սպասարկման տարածքում բնակվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցության իրավունքի իրականացմանը և

12) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

6. Սոցիալական սպասարկողը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն հայցող անձին օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին.

3) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված վկայականը:

7. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

8. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տարածքային մարմնի սպասարկման տարածքում գործող կազմակերպությունները պարտավոր են աջակցել սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

9. Սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տալիս է լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի վերադասը:

10. Սոցիալական աշխատանքի մասնագետին սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում հայտնի դարձած անձնական տեղեկությունները համարվում են մասնագիտական գաղտնիք, և այն հրապարակող կամ տարածող սոցիալական աշխատանքի մասնագետը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի:

Հոդված 41. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն հետևյալ հիմնական իրավունքները.

1) կատարել տնային այցելություններ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված պարտականությունները կատարելու նպատակով.

2) համագործակցել աջակցող ցանցի մասնակից կազմակերպությունների հետ.

3) մասնակցել տեղական սոցիալական ծրագրերի մշակման աշխատանքներին:

2. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետներն ունեն հետևյալ հիմնական պարտականությունները.

1) գնահատել սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքները և իրականացնել նրա անհատական ծրագրով՝ իր կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումները, անհատական ծրագրով նախատեսված ժամկետներում մասնակցել խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին.

2) մատուցել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված համապատասխան սոցիալական ծառայությունները՝ սոցիալական աջակցություն ստացողի սոցիալական կարիքին համապատասխան.

3) պահպանել իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի.

4) տեղեկացնել լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմնի սոցիալական աշխատողին (սոցիալական դեպք վարողին) սոցիալական աջակցություն ստացողի համար իրավիճակի ակնկալվող բնականոն փոփոխություններից տարբերվող ընթացք առաջանալու մասին:

3. Խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և կրում է պարտականություններ:

Հոդված 42. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

1. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն իրավունք ունի կատարելու տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրելու սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները:

2. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետը պարտավոր է՝

1) սոցիալական աջակցություն ստանալու համար դիմած անձին օգնել հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը.

2) միջոցներ ձեռնարկել հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և այլ սոցիալական խմբերին, աջակցել նրանց դիմելու տարածքային մարմնին.

3) պահպանել իր կողմից սպասարկվող անձանց (ընտանիքների) սոցիալական աջակցություն տրամադրելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված դեպքերի.

4) որպես աջակցող ցանցի ներկայացուցիչ՝ մասնակցել սույն օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ և 8-րդ կետերով նախատեսված աշխատանքներին.

5) տնային այցելությունների ժամանակ ներկայացնել սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված վկայականը:

3. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն ունի սույն օրենքով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ իրավունքներ և պարտականություններ:

4. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքում գործող կազմակերպությունները պարտավոր են աջակցել համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետին իր ծառայողական պարտականությունները կատարելիս:

5. Համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետն ունի վկայական, որը տրամադրում է համայնքի ղեկավարը:

ԳԼՈՒԽ 9

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՈՆԴԸ

Հոդված 43. Տարածքային մարմինների աշխատողների վարձատրությունը

1. Տարածքային մարմինների քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Տարածքային մարմինների համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների վարձատրությունն իրականացվում է սույն օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված պահանջների համաձայն:

Հոդված 44. Սոցիալական պաշտպանության ոլորտի խրախուսման և զարգացման ֆոնդը

1. Սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի արդյունավետությունը և որակը բարձրացնելու նպատակով ձևավորվում է

սոցիալական պաշտպանության ոլորտի խրախուսման և զարգացման ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ):

2. Ֆոնդը ձևավորվում է՝

1) պետական նպաստ ստացող ընտանիքի կամ անձի ներկայացրած փաստաթղթերում պետական նպաստի իրավունք տվող կամ պետական նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունները լիազորած պետական մարմնի կողմից հայտնաբերվելու դեպքում ավելի վճարված և վերադարձված կամ բռնագանձված գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին.

2) լիազորած պետական մարմնի կողմից հայտնաբերված՝ սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու կամ կենսաթոշակի կամ դրամական այլ վճարների չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն հանգեցնող հանգամանքների մասին չտեղեկացնելու կամ սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակառուին կամ այլ անձի ավելի վճարված գումարների դեպքում կենսաթոշակից պահումներից կամ դատական կարգով փաստացի բռնագանձված կենսաթոշակի գումարներից տասը տոկոս մասհանումների հաշվին.

3) զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում աշխատանք փնտրողներին և գործատուներին տրամադրված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում հետ գանձված ֆինանսական միջոցներից՝ տասը տոկոս մասհանումների հաշվին.

4) սոցիալական ծառայություններ տրամադրող պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների աշխատողների նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում կիրառվող նյութական պատասխանատվության արդյունքում գանձվող գումարների հաշվին:

3. Ֆոնդը ծախսվում է սոցիալական պաշտպանության ոլորտում՝

1) համակարգչային, կապի և տրանսպորտային միջոցների ձեռք բերման ու շահագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և նյութատեխնիկական ապահովվածության համար.

2) լիազորած պետական մարմնի և լիազորած պետական մարմնի կառավարման ոլորտում գործող մարմնի աշխատողների դրամական պարգևատրման և օգնության համար.

3) շենքերի, շինությունների, աշխատանքային պայմանների բարելավման համար:

4. Ֆոնդի գումարների օգտագործման՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված համապատասխան ուղղությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ տարեկան ծախսերի նախահաշվի ձևով:

5. Ֆոնդի միջոցները մուտքագրվում և օգտագործվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գ Լ ՈՒ Խ 10

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 45. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար

1. Սույն օրենքը խախտողները պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Հոդված 46. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով նախատեսված դեպքերի:

2. Մինչև սոցիալական աջակցության իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

3. Մինչև սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված համալիր կենտրոնների ստեղծումը տարածքային մարմինները սոցիալական ծառայությունները տրամադրում են իրենց գտնվելու վայրերում: Համալիր

սոցիալական ծառայությունների յուրաքանչյուր տարածքային կենտրոնի ստեղծումից հետո տվյալ սպասարկման տարածքի բնակչությանը սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները տեղակայվում են համալիր կենտրոնում:

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված կենսաթոշակների, նպաստների և այլ դրամական վճարների վճարումը 2017 թվականի հունվարի 1-ից իրականացվելու է մեկ միասնական պետական մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրվա դրությամբ «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում աշխատող քաղաքացիական կամ համայնքային ծառայողների, ինչպես նաև խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատանքի մասնագետների վրա սույն օրենքի 39-րդ հոդվածը տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից:

6. Լիազորած պետական մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող տարածքային մարմիններում, ինչպես նաև սույն օրենքի 13-րդ հոդվածով նախատեսված կազմակերպություններում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում, աշխատանքի ընդունված սոցիալական աշխատանքի մասնագետներն օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով սահմանված «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ դասընթացները պետք է ավարտեն աշխատանքի ընդունվելուց հետո՝ առավելագույնը 12 ամիսների ընթացքում:

7. Տարածքային մարմինների համայնքային ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների վարձատրությունը մինչև 2017 թվականի հունվարի 1-ն իրականացվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան: 2017 թվականի հունվարի 1-ից տարածքային մարմինների համայնքային ծառայող

հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձը սահմանվում է տարածքային մարմինների քաղաքացիական ծառայող հանդիսացող սոցիալական աշխատանքի մասնագետների հիմնական աշխատավարձին հավասար չափով, իսկ լրացուցիչ աշխատավարձի և պարգևատրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

8. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-207-Ն օրենքը:

Սոցիալական Աջակցության Տարածքային Գործակալություն

1) գնահատում է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը, ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը.

2) անհատական ծրագրի շրջանակներում համակարգում է սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը. իրականացնում է ընտանիքի սոցիալական գնահատում.

3) մասնակցում է մարզի, իր սպասարկման տարածքի համայնքների տեղական սոցիալական ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին

4) աջակցում է դիմողին բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների իրականացմանը

5) հանդես է գալիս սոցիալական աջակցություն ստացողի օրինական շահերի և իրավունքների պաշտպանությամբ՝ նրա դիմելու դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ

6) համագործակցում է աջակցող ցանցի հետ

7) կատարում է անձանց ընդունելություն՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն

*Աղբյուր՝ «Սոցիալական Աջակցության մասին» ՀՀ օրենք
Հոդված 17, հոդված 24

Այս հրապարակումը պատրաստվել Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն»
կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: